ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

№ 1238-Ա/Ք «15» 11 2011թ.

## ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0608 «ԱՌԵՎՏՈՒՐ (ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010թ. մարտի 4-ի N 8 արձանագրային որոշման 14-րդ ՝ «Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասնագիտությունների և որակավորումների՝ կարողությունների ձևավորմանը միտված պետական կրթական չափորոշիչների մշակման և ներդրման հայեցակարգին ու գործողությունների ցանկին հավանություն տալու մասին» կետը, ՀՀ ԿԳ նախարարի 2009թ. մայիսի 12-ի «Նախնական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների և ուսումնամեթոդական փաստաթղթերի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն տալու նպատակով ստեղծվող ոլորտային հանձնաժողովների կազմը՝ ըստ մասնագիտական խմբերի հաստատելու մասին» N 445-Ա/Ք հրամանով հաստատված ոլորտային հանձնաժողովի փորձագիտական եզրակացությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել միջին մասնագիտական կրթության 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը՝ համաձայն հավելվածի:

2. Միջին մասնագիտական կրթության 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը մեկ պարբերաշրջանի ընթացքում փորձարկման նպատակով ուսումնական հաստատություններում ներդնել 2012թ. սեպտեմբերի 1-ից:
3. Նախարարության աշխատակազմի նախնական և միջին մասնագիտական կրթության վարչությանը. մինչև 2011 թվականի դեկտեմբերի 30-ը հաստատման ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը, որոնցում փորձարկման նպատակով ներդրվելու է 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը:
4. Կրթության ազգային ինստիտուտի տնօրենին /Ն. Ղուկասյան/. ապահովել չափորոշչի փորձարկման ընթացքի վերաբերյալ ուսումնական հաստատություններից վերլուծական հաշվետվությունների ստացումը:
5. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Մ. Մկրտչյանին:



Ա. ԱՇՈՏՅԱՆ

Հավելված ___
ՀՀ կրթության և գիտության
նախարարի
2011թ. Նոյեմբերի 15 -ի N 1238-Ա/Ք
հրամանի

# ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0608 «ԱՌԵՎՏՈՒՐ (ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԿՈՄԵՐՍԱՆՏ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

## ԳԼՈՒԽ 1.
## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափորոշիչը սահմանում է միջին մասնագիտական կրթության 0806 «Առևտուր ըստ ճյուղերի» մասնագիտության՝ Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակի «Կոմերսանտ» որակավորման ներկայացվող պահանջները, հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսանողների ուսումնական բեռնվածության նվազագույն և առավելագույն ծավալները:
2. Միջին մասնագիտական կրթության 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականցվել ուսուցման հետևյալ ձևերով՝

1) առկա,

2) հեռակա,

3) դրսեկության (էքստեռնատ)

4) հեռավար (դիստանցիոն):

3. Միջին մասնագիտական կրթության 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացման համար սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.

1) կրթության առկա ձևով.
   ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 2 տարի
   բ. հիմնական կրթության հիմքով ՝ 3 տարի

2) կրթության հեռակա ձևով.
   ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 3 տարի

3) դրսեկության (էքստեռնատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերով.

կրթության հիմքը և ուսուցման տևողությունը որոշում է ուսումնական հաստատությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստեռնատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշման:

4. Միջին մասնագիտական կրթության 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 2736 ժամ է, առավելագույն ծավալը՝ 4428 ժամ: Հիմնական կրթության հիմքով հիմնական կրթական ծրագրի յուրացման դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 52 շաբաթով:

## ԳԼՈՒԽ 2.

## ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0608 «ԱՌԵՎՏՈՒՐ ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Միջին մասնագիտական կրթության 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտության մասնագետի մասնագիտական գործունեության բնութագիրը տրվում է ըստ զբաղմունքների տեսակների և մասնագիտական պարտականությունների:

6. Միջին մասնագիտական կրթության 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտությամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները՝

1) մասնագետներ՝ առևտրային գործունեության, այդ թվում՝,

ա. ապրանքատեսակների զարգացման աշխատանքներ,,

բ. համակարգող՝ ապրանքատեսակների զարգացման աշխատանքների,

գ. գործակալ՝ ապրանքատեսակների զարգացման,

դ, գործակալ՝ առևտրային և առևտրական աշխատանքների,

ե. համակարգող՝ վաճառքի աշխատանքների,

զ. համակարգող՝ վաճառակետերի զարգացման աշխատանքների,

է. պատասխանատու՝ հիմնական հաճախորդների հետ աշխատանքների:

2) Մասնագետներ՝ ձեռնարկատիրական գործունեության այլ խմբեր չներառված, այդ թվում՝

ա. վերլուծաբան՝ շուկայի ուսումնասիրությունների,

բ. մասնագետ՝ իրացումը խթանող եղանակների մշակման,

գ. մասնագետ՝ տնտեսական գործունեության արդյունավետության գնահատման:

7. Միջին մասնագիտական կրթության 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտությամբ մասնագետի մասնագիտական պարտականություններն են.

1. շուկայի ուսումնասիրություն,
2. ապրանքների ուսումնասիրություն,
3. մրցակիցների, մատակարարների ուսումնասիրում,
4. առևտրային գործունեության ուսումնասիրում,
5. մանրածախ առևտրային գործունեություն,
6. մեծածախ առևտրային գործունեություն,
7. ապրանքների մասին տեղեկատվության տրամադրում,
8. ապրանքների ոչ սակագնային հատկանիշների դասակարգում,
9. ապրանքների որակի հսկողություն,
10. ապրանքի պահպանման, տեղափոխման, փաթեթավորման պայմանների սահմանում,
11. վաճառքի կազմակերպում,
12. վաճառքի խորհրդատվության տրամադրում,
13. լոգիստիկ առևտրային գործունեություն կազմակերպում,
14. սպառողների հետ արդյունավետ փոխհարաբերությունների հաստատում,
15. աշխատանքի անվտանգության պայմանների պահպանում,
16. մարքեթինգային հետազոտության իրականացում,
17. վաճառքի խթանման միջոցառումների իրականացում,
18. վաճառակետերում ապրանքի դիրքավորում,
19. տնտեսական գործունեության արդյունքների վերլուծություն,
20. ապրանքաշրջանառության գործարքների հաշվառում և ձևակերպում,
21. ապրանքի՝ հումքի, արտադրատեսակների, սարքավորումների, տարայի հաշվառում,
22. աշխատանքային արդյունավետ փոխհարաբերությունների սահմանում,
23. աշխատանքային ժամանակի արդյունավետ կառավարում,
24. ապրանքային տեսականու վերաբերյալ տեղեկատվության մշակում համակարգչային տեխնիկայի միջոցով:

## ԳԼՈՒԽ 3.

## ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0608 «ԱՌԵՎՏՈՒՐ (ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

8. Միջին մասնագիտական կրթության 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի նկատմամբ ընդհանուր պահանջները սահմանվում են շրջանավարտին ներկայացվող ընդհանուր պահանջների համաձայն:
9. Միջին մասնագիտական կրթության 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է՝
    1) ունենա մասնագիտական գործունեության տվյալ բնագավառում իր մասնագիտական դերին անհրաժեշտ կարողությունները ձևավորելու համար պահանջվող տեսական ու գործնական գիտելիքներ,
    2) դրսևորի աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում գործընկերների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողություն,
    3) ունենա որոշակի փոփոխվող իրավիճակներում առաջացած խնդիրներին մասնագիտական տիպային և այլընտրանքային լուծումներ առաջարկելու կարողություն,
    4) դրսևորի մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը համադրելու և ամբողջության մեջ դիտարկելու, ինչպես նաև քաղաքացիական գիտակցություն ցուցաբերելու կարողություն,
    5) ունենա մասնագիտական գործունեության գործառույթները սահմանված նորմերին համապատասխան իրականացնելու հմտություններ,
    6) ցուցաբերի իր և աշխատակիցների (առկայության դեպքում) մասնագիտական կարիքները գնահատելու և դրանց կարգավորման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու կարողություն,
    7) ունենա մասնագիտական կարողությունների պարբերաբար կատարելագործման ձգտում և ինքնուսուցման կարողություն,
    8) ցուցաբերի մասնագիտական և ընդհանուր բնույթի անհրաժեշտ տեղեկատվություն փնտրելու, դրանցից օգտվելու և դրանք նպատակային օգտագործելու կամ փոխանցելու կարողություն,
    9) ունենա աշխատակիցների (առկայության դեպքում) աշխատանքները կազմակերպելու կամ գործընկերային հարաբերությունները (լիազորության դեպքում) ըստ կարողությունների և մասնագիտացման համակարգելու հմտություններ,

10) ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ցուցաբերի ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառելու կարողություն:

## ԳԼՈՒԽ 4.

## 0608 «ԱՌԵՎՏՈՒՐ(ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

10. Միջին մասնագիտական կրթության 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի նկատմամբ պահանջները սահմանվում են ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների, առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական կարողությունների բնագավառում շրջանավարտին ներկայացվող պահանջների համաձայն:

11. Միջին մասնագիտական կրթության 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում պետք է՝

1) իմանա ՀՀ Սահմանադրության, զբաղվածության տվյալ բնագավառը կարգավորող հիմնական նորմատիվ ակտերի, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները,
2) տիրապետի հայոց լեզվին,
3) հաղորդակցվի առնվազն երկու օտար լեզուներով,
4) տիրապետի առողջ կենսակերպ վարելու, հիգիենայի և ֆիզիկական կուլտուրայի կանոններին,
5) գիտելիքներ ունենա ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի վերաբերյալ,
6) ունենա անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ,
7) ցուցաբերի կիրառական տնտեսագիտության հիմնադրույթների, մասնագիտական գործունեության բնագավառի տնտեսական երևույթների և հարաբերությունների առանձնահատկությունների, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքների, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունների իմացություն:
8) իմանա էկոլոգիական հիմնական հասկացությունների բովանդակությունը, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրների դրույթները,

9) պատկերացում ունենա արտակարգ իրավիճակների մասին, տիրապետի արտակարգ իրավիճակներում գործելու հիմնական սկզբունքներին և մոտեցումներին, տեղյակ լինի փրկարարական աշխատանքների կազմակերպման կառուցվածքին և ձևերին, օգտագործի անհատական պաշտպանության միջոցներ:

12. Միջին մասնագիտական կրթության 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի աղյուսակ 1-ում բերված մոդուլներով սահմանված առանցքային հմտություններին:

13. Միջին մասնագիտական կրթության 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի աղյուսակ 2-ում բերված մոդուլներով ըստ մասնագիտացումների սահմանված ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողություններին:

## ԳԼՈՒԽ 5.

## ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0608 «ԱՌԵՎՏՈՒՐ( ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ

14. Միջին մասնագիտական կրթության 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է,

2) ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքի փորձ և մասնագիտական կրթություն:

3) արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

15. Միջին մասնագիտական կրթության 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) հաստատությունը պետք է ունենա մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների ծրագրային բովանդակությանը համապատասխանող ուսումնական,

մեթոդական և տեղեկատվական նյութեր (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա և այլն), գնահատման և ատեստավորման նպատակով օգտագործվող նյութեր, ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացմանը նպաստող այլ նյութեր, ուղեցույցներ:

16. Միջին մասնագիտական կրթության 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ պահանջները սահմանվում են ըստ ուսումնական կաբինետների, լաբորատորիաների, արհեստանոցների, սպորտային համալիրի: Դրանց հագեցվածությունը որոշվում է ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան:

1) ՈՒսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝

ա. ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաների,

բ. մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական առարկաների,

գ. մարքեթինգի,

դ. մանրածախ առևտրային գործունեության,

ե. մեծածախ առևտրային գործունեության,

զ. համակարգչային օպերատորության:

2) ՈՒսումնական լաբորատորիաների երաշխավորվող ցանկը՝

ա. ապրանքի որակի փորձաքննության

բ. քիմիայի

3) Սպորտային համալիր՝

ա. մարզադահլիճ,

բ. մարզահրապարակ,

Կրթական ծրագիր իրականացնող հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ:

17. Միջին մասնագիտական կրթության 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) առկա ուսուցման ձևի համար ուսումնական տարվա սկիզբը սեպտեմբերի 1-ն է, իսկ հեռակա, դրսեկության (էքստեռնատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերի համար սահմանվում է ուսումնական պլաններով,

2) ուսումնական յուրաքանչյուր տարվա տևողությունը սահմանվում է ուսումնական պլանով,

3) ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանզանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները,

4) ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն և պարտադիր պարապմունքների շաբաթական ծավալը չպետք է գերազանցի 36 ժամը՝ առանց նախասիրական առարկաների, խորհրդատվությունների և լրացուցիչ արտալսարանային պարապմունքների բեռնվածության,

5) հեռակա ուսուցման ձևի դեպքում ուսանողների հետ պարտադիր պարապմունքների տարեկան ծավալը առնվազն 160 ժամ է,

6) ուսումնական խմբի համար խորհրդատվության տարեկան ծավալը կազմում է մինչև 100 ժամը,

7) նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

18. Միջին մասնագիտական կրթության 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ներառում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաներ,

2) պրակտիկայի յուրաքանչյուր տեսակի տևողությունը սույն չափորոշչով սահմանված պրակտիկայի ընդհանուր տևողությանը համապատասխան սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով,

3) պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում է ուսումնական հաստատությունը.

4) ուսումնական պրակտիկաներն անցկացվում են պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում և տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական արհեստանոցներում, ուսումնափորձնական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև կազմակերպություններում, հաստատություններում,

5) արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19. Միջին մասնագիտական կրթության 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտության ուսանողների ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնառության ընթացքում բոլոր ուսանողները պարբերաբար ատեստավորվում են, որի նպատակը ըստ սույն չափորոշչով սահմանված կարողությունների տարրերի նրանց ձեռքբերումները հավաստող վկայություններ ստանալն է,

2) ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ժամկետների, անցկացման ձևի և ներառվող նյութի ծավալի մասին,

3) պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով,

4) պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա ստուգել շրջանավարտի մասնագիտական կարողությունների և հմտությունների համապատասխանությունը սույն չափորոշչով 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտության մասնագետի համար սահմանված պահանջներին:

## ԳԼՈՒԽ 6.

## ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0608 «ԱՌԵՎՏՈՒՐ (ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԿՈՄԵՐՍԱՆՏ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

20. Միջին մասնագիտական կրթության 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու համար հաստատությունը կազմում և հաստատում է առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների, ընտրովի դասընթացի ուսումնական ծրագրերը, կրթության կառավարման պետական լիազորված մարմնի երաշխավորած ձևին համապատասխան ուսումնական պլանը՝ հաշվի առնելով 3-րդ աղյուսակում բերված օրինակելի ուսումնական պլանը:

21. Միջին մասնագիտական կրթության 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող հաստատությունը սույն չափորոշչի հիման վրա մոդուլային ուսումնական ծրագրերը և ուսումնական պլանը կազմելու ժամանակ՝

1) կարող է փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը՝ պահպանելով մասնագետի (շրջանավարտի) կարողություններին և հմտություններին ներկայացվող պահանջները,

2) պետք է մոդուլների արդյունքներին և դրանց կատարման չափանիշներին համապատասխան ուսումնական ծրագրերը մշակելիս հաշվի առնի գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,

3) պետք է առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշի տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,

4) պետք է միջանկյալ ատեստավորման ընդհանուր շաբաթների սահմաններում որոշի ըստ կիսամյակների այս ատեստավորմանը հատկացվող ժամանակը,

5) պետք է մասնագիտության նկարագրին համապատասխան տվյալ որակավորման ամբողջացման անհրաժեշտությունը և առանձնահատկությունը հաշվի առնելով՝ կազմի և հաստատի ընտրովի դասընթացների ուսումնական ծրագրերը,

6) օգտվելով երաշխավորված ձևում տրված պարզաբանումներից՝ պետք է կազմի ուսումնական պլանի կիրառման պարզաբանումները,

7) պետք է պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշի ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,

8) պետք է սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերին համապատասխան ընտրի ամփոփիչ ատեստավորման ձևը:

**Միջին մասնագիտական կրթության 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ**

| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»** | |
|---|---|
| **Մոդուլի դասիչը** | ԱՀ-Հ-5-11-001 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը |
| **Մոդուլի տևողությունը** | 54 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար,<br>բ.ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները,<br>գ.ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները,<br>դ.շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը,<br>ե.անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը |
| | ա. ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը,<br>բ. բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին, |

| | |
|---|---|
| | գ.հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք,<br>դ.ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է,<br>ե.մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը |
| | ա. ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը,<br>բ. կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան,<br>գ. օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար,<br>դ. կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի,<br>ե. վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր,<br>զ. բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի,<br>է. գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում |
| **Կատարման չափանիշներ** | ա. նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հասցեատիրոջ,<br>բ. ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը,<br>գ. առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար,<br>դ. օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,<br>ե. ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ<br>զ. պահպանում և եզրափակում է երկխոսությունը,<br>դ. կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները: |

| | |
|---|---|
| **Ուսումնառության արդյունք 5** | Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունական գործընկերության համար |
| | ա. ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն),<br>բ. հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը,<br>գ. հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար,<br>դ. օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,<br>ե. հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն,<br>զ. ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԱՀ-ԱԱՕ-5-11-001 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ |
| | 54ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը,<br>բ. ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները, |

| | |
|---|---|
| | գ. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները,<br>ե. ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները,<br>զ. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները,<br>է. ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական),<br>բ. ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառայգայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն),<br>գ. ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը,<br>դ. ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները,<br>բ. ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները,<br>գ. ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները,<br>դ. ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Ցուցաբերել առաջին օգնություն |
| **Կատարման չափանիշներ** | ա. տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին,<br>բ. առաջին օգնության գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում,<br>գ. կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն,<br>դ. կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն, |

| | |
|---|---|
| | ե. կատարում է  այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ,<br>զ. կատարում է  վիրակապման և անշարժացման գործողություն՝ տարբեր կոտրվածքների դեպքում,<br>է. ներկայացնում է  տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԱՀ-ՀՕ-5-11-001 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի  նպատակն  է զարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները,  աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի , գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերերը, կատարելագործել  համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները |
| **Մոդուլի տևողությունը** | 36 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Համակարգչային տեխնիկայի տիրապետում  և օպերացիոն համակարգի կիրառում |
| **Կատարման չափանիշներ** | ա. տիրապետում է համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչներին<br>բ. տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին,<br>գ. տիրապետում  է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերից (printer, scaner, projector, fax, պատճենման սարք և այլն)<br>դ. ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը,<br>ե. ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (microsoft office),<br>զ. կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը, |

| | |
|---|---|
| | է. օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից,<br>ը. ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ, պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում<br>թ. կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print) |
| **Ուսումնառության արդյունք 2** | Տեքստերի խմբագրում և ֆորմատավորում |
| **Կատարման չափանիշներ** | ա. կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար,<br>բ. մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ,<br>գ. կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ,<br>դ. կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտողային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից,<br>ե. կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ և այլն, |
| **Ուսումնառության արդյունք 3** | Աղյուսակների պատրաստում և խմբագրում |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստել դրանք<br>բ. կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ,<br>գ. կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուներ և այլն)<br>դ. փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում,<br>զ. ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջ: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում |
| **Կատարման չափանիշներ** | ա. գծագրում է գրաֆիկական օբյեկտներ,<br>բ. գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը,<br>գ. գծագրում է կանոնավոր պատկերներ,<br>դ. ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով,<br>ե. խմբավորում է գրաֆիկական օբյեկտները,<br>զ. գծագրում է տեքստային բլոկներ, |

| | |
|---|---|
| | կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում |
| **Ուսումնառության արդյունք 5** | Ցուցադրության կազմակերպում համակարգչային ծրագրերով |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը,<br>բ.  մուտքագրում է  տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ,<br>գ.  ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով,<br>դ. կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար<br>ե. ցուցադրում է պատրաստված տեղեկատվական  նյութը: |
| **Ուսումնառության արդյունք 6** | Համացանցում աշխատելու իմացություն |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է « համացանց » հասկացությունը,<br>բ. օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը,<br>գ. ներկայացնում է History, Favorites, Stop,  Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը,<br>դ. փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից),<br>ե. կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները,<br>զ. գրանցվում է  էլեկտրոնային փոստում , ինտերնետային ծրագրերում  և այլ կայքերում,<br>է. օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում ինֆորմացի (հաղորդագրություն, նամակ և  կցորդ): |

**Միջին մասնագիտական կրթության 0608 «Առևտուր (ըստ ճյուղերի)» Մասնագիտության «Կոմերսանտ» որակավորման մասնագետի հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ**

| «ԱՊՐԱՆՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» | |
|---|---|
| **Մոդուլի դասիչը** | ԿՈՄ 5-11-002 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսված է կոմերսանտի պատրաստման համար: Այս մոդուլի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել բավարար չափով գիտելիքներ և ունակություններ ապրանքագիտության տեսության վերաբերյալ:<br>Ավարտելով այս մոդուլը ուսանողը կտիրապետի ապրանքագիտության էությանը, խնդիրներին, կդասակարգի և կկոդավորի ապրանքները, կտիրապետի ապրանքային տեսականու առանձնացմանը, ապրանքների վերաբերյալ տեղեկատվություն կհավաքագրի և ապրանքների վաճառքի հետ կապված անհրաժեշտ հմտություններ ձեռք կբերի: |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Ներկայացնել ապրանքագիտության տեսության առարկայի էությունը և խնդիրները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում ապրանքագիտության առարկան և հիմնական կատեգորիաները,<br>բ. Ճիշտ է ներկայացնում պահանջմունքի բովանդակությունը,<br>գ. ճիշտ է բացահայտում ապրանքների սպառողական արժեքը,<br>դ. ճիշտ է ներկայացնում ապրանքագիտության մեթոդը և կապը այլ գիտությունների հետ, |

| | |
|---|---|
| | ե. ճիշտ է սահմանում է ապրանքագիտության խնդիրները: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Մեկնաբանել ապրանքների դասակարգման և կոդավորման սկզբունքները |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում ապրանքների դասակարգման նշանակությունը, սկզբունքները և կանոնները,<br>բ. ճիշտ է բնորոշում ապրանքների դասակարգման հիմնական հատկանիշները,<br>գ. ճիշտ է ներկայացնում ապրանքների դասակարգման ձևերը,<br>դ. ճիշտ է ներկայացնում ապրանքների կոդավորումը: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Թվարկել ապրանքների տեսականու դասակարգման հատկանիշները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում ապրանքների տեսականու բնորոշումը, ձևերը,<br>բ. ճիշտ է ներկայացնում դասակարգման հատկանիշները,<br>գ. ճիշտ է ներկայացնում տեսականին բնութագրող հիմնական ցուցանիշները,<br>դ. ճիշտ է վերլուծում տեսականու կառավարումը և ձևավորումը,<br>ե. ճիշտ է ներկայացնում նոր արտադրանքի ընտրության ժամանակ հաշվի առնվող չափանիշները (ապրանքների առաքման և արտադրական հնարավորությունները բնութագրող չափանիշները): |
| **Ուսումնառության արդյունք 4** | Թվարկել ապրանքներին ներկայացվող պահանջները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ձևակերպում ապրանքին ներկայացվող ընդհանուր պահանջները,<br>բ. Ճիշտ է ներկայացնում ապրանքների սպառողական հատկությունների բնութագիրը,<br>գ. ճիշտ է բացատրում ապրանքի սպառողական նշանակությունը, հուսալիության, էրգոնոմիկական, գեղագիտական, էկոլոգիական, անվտանգության հատկությունները,<br>դ. ճիշտ է մեկնաբանում ապրանքի որակ հասկացությունը և ներկայացնում որակի ցուցանիշները,<br>ե. ճիշտ է ներկայացնում որակի ցուցանիշները ըստ խմբերի բնութագրվող հատկությունների թվի, հատկությունների բնույթի, արտահայտման միավորի որոշման մեթոդի: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Ապրանքների վերաբերյալ տեղեկատվության ձևերի ու միջոցների ներկայացում |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում ապրանքի վերաբերյալ տեղեկատվության դերը, |

| | |
|---|---|
| | բ. ճիշտ է  մեկնաբանում ապրանքի վերաբերյալ տեղեկատվության դասակարգման հայտանիշները,<br>գ. ճիշտ է մեկնաբանում  գովազդ-տեղեկատվության էությունը: |
| **Ուսումնառության արդյունք  6** | Ներկայացնել ապրանքների մակնիշավորումը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է  ներկայացնում  մակնիշավորման էությունը, մակնիշավորման պայմանները և ձևերը<br>բ. ճիշտ է ներկայացնում մակնիշա-պայմանական տեղեկատվությունը,<br>գ. ճիշտ է մեկնաբանում  ապրանքի շահագործման ուղեցույցային տեղեկատվության էությունը, |
| **«ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ  ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԿՈՄ 5-11-003 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսված է կոմերսանտի պատրաստման համար: Այս մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել ոչ պարենային ապրանքների, սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների ներմուծման, արտահանման, արտադրության, մշակման, վերամշակման, փաթեթավորման, մակնիշավորման, փոխադրման, պահման, իրացման, ինչպես նաև առևտրի և հանրային սննդի ոլորտում ծառայությունների մատուցման փուլերում անվտանգության  գիտելիքներ:<br>Ավարտելով այս մոդուլը ուսանողի մոտ կձևավորվի  սպառողներին պատշաճ որակի և սպառողների կյանքի ու առողջության համար անվտանգ  ապրանքների մատուցման, ինչպես նաև ապրանքների և դրանք արտադրողների  (կատարողների, վաճառողների) մասին տեղեկատվության տրամադրման հմտություն: |
| **Մոդուլի տևողությունը** | 72  ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության  արդյունք  1** | Տիրապետել ապրանքների շրջանառության բոլոր փուլերում որակի և անվտանգության հետ առնչվող |

| | |
|---|---|
| | հիմնական հասկացություններին և  ընդհանուր դրույթներին |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում ապրանքների անվտանգությանը և որակին ներկայացվող իրավական հիմքերը,<br>բ. ճիշտ է ներկայացնում ապրանքի որակ հասկացությունը և դրա էական խախտումը,<br>գ. ճիշտ է տարբերակում, թե որոնք ենք համարվում սննդամթերք և որոնք չեն համարվում սննդամթերք, որոնք են ոչ պարենային ապրանքներ,<br>դ. ճիշտ է ներկայացնում սննդամթերքի հետ շփվող նյութեր հասկացությունը,<br>ե. ճիշտ է ներկայացնում  պարենային հումքը,<br>զ. ճիշտ  է ներկայացնում հատուկ նշանակության սննդամթերքը,<br>է. ճիշտ է  ներկայացնում սննդամթերքի անվտանգություն հասկացությունը,<br>ը. ճիշտ է ներկայացնում, թե որոնք են  մնացորդային նյութերը և որոնք են սննդային հավելումները, որոնք են գենետիկորեն ձևափոխված մթերքները,<br>թ. ճիշտ է ներկայացնում սննդամթերքի անվտանգության ապահովման պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն ու խնդիրները: |
| **Ուսումնառության  արդյունք  2** | Ներկայացնել  առանձին ապրանքատեսակների անվտանգությանը ներկայացվող պահանջները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում ապրանքի անվտանգությունը,<br>բ. ճիշտ է ներկայացնում սննդամթերքի արտադրությանը ներկայացվող պահանջները,<br>գ. ճիշտ է ներկայացնում սննդամթերքի անվտանգությանը սպառնացող ռիսկի (վտանգի) վերլուծություն վտանգի աղբյուրի վերլուծության և կրիտիկական կետերի հսկման (ՎԱՎԿԿՀ) համակարգը,<br>դ. ճիշտ է ներկայացնում սննդի շղթայի փուլերին և աշխատակիցներին ներկայացվող սանիտարահիգիենիկ պահանջները: |
| **Ուսումնառության  արդյունք  3** | Սահմանել ապրանքի (աշխատանքի) ծառայության, պիտանիության, ինչպես նաև երաշխիքային ժամկետները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում պիտանելիության ժամկետ հասկացությունը, |

| | |
|---|---|
| | բ. ճիշտ է ներկայացնում ապրանքների անվանացանկը, որի համար սահմանվում են պիտանիության ժամկետներ,<br>գ. ճիշտ է ներկայացնում արտադրողի կողմից սահմանված պիտանիության ժամկետի ավարտից հետո օգտագործման համար ոչ պիտանի պարենային և ոչ պարենային ապրանքների անվանացանկը,<br>դ. ճիշտ է ներկայացնում ապրանքների պիտանիության և երաշխիքային ժամկետների սահմանումը: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Տիրապետել Հայաստանի Հանրապետությունում իրացվող ոչ պարենային ապրանքների, սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների անվտանգությանը, մակնշմանը և փաթեթավորմանը ներկայացվող պահանջները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում, մակնիշավորման դերը,<br>բ. ճիշտ է ներկայացնում Հայաստանի Հանրապետությունում իրացվող ոչ պարենային ապրանքների, սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների հայերեն մակնշմանը ներկայացվող պահանջները,<br>գ. ճիշտ է ներկայացնում ապրանքի (աշխատանքի, ծառայության) անվտանգության վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը,<br>դ. ճիշտ է ներկայացնում հանրապետությունում իրացվող և ներմուծվող սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների հայերենով մակնշման մեջ ներառվող պարտադիր տեղեկատվությունը, |
| **Ուսումնառության արդյունք 5** | Ներկայացնել արտադրության և շրջանառության փուլերում պարենային և ոչ պարենային ապրանքների անվտանգության հիմնավորման ընթացակարգը, |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում իրացման փուլում ոչ պարենային ապրանքների անվտանգությունը հիմնավորող ուղեկցող փաստաթղթերի ցանկը,<br>բ. ճիշտ է ներկայացնում կենդանական և բուսական ծագման պարենային հումքի անվտանգությունը հավաստող անհրաժեշտ փաստաթղթերը,<br>գ. ճիշտ է ներկայացնում գովազդվող սննդամթերքին և սննդային հավելումներին ներկայացվող |

| | |
|---|---|
| | պահանջները,<br>դ. ճիշտ է ներկայացնում իրացման փուլում պարենային ապրանքների անվտանգությունը հիմնավորող ուղեկցող փաստաթղթերի ցանկը: |
| **«ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԿՈՄ 5-11 - 004 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսված է կոմերսանտի պատրաստման համար: Այս մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել տնտեսագիտական որոշակի գիտելիքներ, մոտեցումներ և կարողություններ առևտրային կազմակերպության ռեսուրսների գնահատման, տնտեսաֆինանսական գործունեության ցուցանիշների վերլուծության վերաբերյալ:<br>Ավարտելով այս մոդուլը ուսանողի մոտ կձևավորվի առևտրային կազմակերպության ռեսուրսների գնահատման և տնտեսաֆինանսական գործունեության ծավալների գնահատման և հաշվարկման ունակություններ և հմտություններ: |
| **Մոդուլի տևողությունը** | 36 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն**:** |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Բնորոշել կազմակերպության ռեսուրսները և դրանց գնահատման չափանիշները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է բնութագրում կազմակերպության ռեսուսները,<br>բ. ճիշտ է բնութագրում կազմակերպության նյութական ռեսուրսները,<br>գ. ճիշտ է գնահատում կազմակերպության աշխատանքային ռեսուրսների կազմը,<br>դ. ճիշտ է գնահատում կազմակերպության ֆինանսական ռեսուրսները,<br>ե. ճիշտ է գնահատում կազմակերպում ռեսուրսների օգտագործման մակարդակը: |

| | |
|---|---|
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Ներկայացնել գնագոյացման գործոնները և մոտեցումները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում գնագոյացման վրա ազդող գործունները,<br>բ. ճիշտ է ներկայացնում գնագոյացման մեթոդները,<br>գ. ճիշտ է ներկայացնում ապրանքի ինքնարժեքի ձևավորման մեխանիզմը,<br>դ. ճիշտ է մեկնաբանում կազմակերպության գնագոյացման ռազմավարությունները: |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Կատարել կազմակերպության տնտեսաֆինանսական գործունեության վերլուծություն |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում առևտրային կազմակերպության տնտեսաֆինանսական գործունեության հիմնական ցուցանիշները,<br>բ. ճիշտ է կատարում կազմակերպության տնտեսաֆինանսական վիճակի փոփոխությունների վերլուծություն,<br>գ. ճիշտ է բացահայտում համապատասխան ցուցանիշների փոփոխության չափը և պատճառները,,<br>դ.ճիշտ է հաշվարկում համապատասխան ցուցանիշների բարելավման հնարավորությունները: |
| **ՈՒսումնառության արդյունք** | Ներկայացնել առևտրային կազմակերպության հարկային և մաքսային գործունեությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում առևտրային կազմակերպության հարկային օրենսդրական ակտերը և հարկայինքաղաքականությունը,<br>բ. ճիշտ է ներկայացնում առևտրային կազմակերպության մաքսային օրենսդրական ակտերը և մաքսային քաղաքականությունը,<br>գ. ճիշտ է ներկայացնում առանձին հարկատեսակների առանձնահատկությունները և հաշվարկման կարգը: |
| **«ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԿՈՄ 5-11-005 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսված է կոմերսանտի պատրաստման համար: Այս մոդուլի նպատակն է սովորողի |

| | |
|---|---|
| | մոտ ձևավորել կոմերսանտին անհրաժեշտ մարքեթինգային մտածելակերպ, մարքեթինգային հիմնարար հասկացությունների և կառավարման հայեցակարգերի իմացություն, մարքեթինգային գործիքակազմի և դրանց կիրառման մեթոդների և եղանակների իմացություն և գործնական կիրառման նախնական հմտություններ: <br> Ավարտելով այս մոդուլը ուսանողը կկարողանա ներկայացնել առևտրային գործունեության տեսանկյունից մարքեթինգի դերը, խնդիրները, գործառույթները, գործիքները, դրանց կիրառման մեթոդներն ու առանձնահատկությունները, ինչպես նաև կկարողանա հստակ պատկերացնել իր իրավասությունների ու պարտականությունների շրջանակը կազմակերպության առևտրային գործունեության բնա•ավառում: |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Ներկայացնել մարքեթինգի բովանդակությունը, նպատակները, խնդիրները, գործառույթները, սկզբունքները, հիմնարար հասկացությունները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է մեկնաբանում մարքեթինգի առաջացումը և զարգացման փուլերը, <br> բ. ճիշտ է բնորոշում մարքեթինգի հիմնական սահմանումները, <br> գ. ճիշտ է ներկայացնում մարքեթինգի առաջացման նախադրյալները, <br> դ. ճիշտ է բնորոշում մարքեթինգի նպատակները, խնդիրները, <br> ե. ճիշտ է բնորոշում մարքեթինգի գործառույթները, սկզբունքները, <br> զ. ճիշտ է սահմանում մարքեթինգի հիմնարար հասկացությունները |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Վերլուծել կազմակերպության շուկայական հնարավորությունները և մրցակցային առավելությունները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է կարողանում բնորոշել և վերլուծել սպառողների կարիքները, պահանջմունքները, |

| | |
|---|---|
| | պահանջարկը:<br>բ. ճիշտ է պատկերացնում փոխանակման գործընթացը և շուկայի տարբեր սուբյեկտների հետ գործընկերային հարաբերությունների հաստատման առանձնահատկությունները,<br>գ. ճիշտ է բնորոշում շուկան, դրա տեսակները և գործողության մեխանիզմները,<br>դ. ճիշտ է առանձնացնում կազմակերպության նպատակային սպառողներին և ընտրում կազմակերպության համար շուկայի առավել նպատակային սեգմենտը,<br>ե. ճիշտ է կանխատեսում շուկայի առևտրային իրավիճակը և տարողությունը,<br>զ. ճիշտ է բնորոշում մրցակցությունը և կարողանում օգտագործել կազմակերպության մրցակցային առավելությունները,<br>է.ճիշտ է պատկերացնում մարքեթինգային տեղեկատվության անհրաժեշտությունը առևտրային գործունեություն ծավալող կազմակերպության համար, դրա տեսակները, հավաքման եղանակները և տեղեկատվության հավաքման աշխատանքներում իր մասնակցության շրջանակները,<br>ը.ճիշտ է բնորոշում մարքեթինգային հետազոտությունների էությունը, իրականացման ուղղությունները և դրանցում իր ներգրավվածության աստիճանը: |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Բնորոշել մարքեթինգի համալիրը և դրա մշակման գործընթացը |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է բնորոշում մարքեթինգի համալիրի բովանդակությունը,<br>բ. ճիշտ է բնորոշում ապրանքը և հստակ ներկայացնում դրա դասակարգման մոտեցումները,<br>գ.ճիշտ է բնորոշում գինը, դրա վրա ազդող գործոնների համախումբը, գնագոյացման մեթոդները, ռազմավարությունները և հստակ ներկայացնում է գնի սահմանման նշանակությունը առևտրային կազմակերպության համար, ինչպես նաև դրա առանձնահատկությունները տարբեր շուկաներում,<br>դ. ճիշտ է ներկայացնում վաճառքի դերը կազմակերպության համար, դրա իրականացման մեթոդները, ձևերը,<br>ե, ճիշտ է բնորոշում առաջանցման միջոցառումների նշանակությունը կազմակերպության առևտրային |

| | |
|---|---|
| | գործունեության տեսանկյունից: |
| **ՈՒսումնառության արդյունք 4** | Տիրապետել կազմակերպությունում իր գործունեության շրջանակներին |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում մարքեթինգի ռազմավարությունը, դրա իրականացման գործընթացը,<br>բ. ճիշտ է ներկայացնում իր պարտականությունների և իրավասությունների շրջանակը ընկերության ապրանքային քաղաքանության մշակման գործընթացում,<br>գ. ճիշտ է բնորոշում իր գործողությունների շրջանակը ընկերության գնային քաղաքականության մշակման գործընթացում,<br>դ. ճիշտ է բնորոշում իր պարտականությունների և իրավասությունների շրջանակը ընկերության վաճառահանման քաղաքականության մշակման գործընթացում,<br>ե. ճիշտ է ներկայացնում իր գործողությունների շրջանակը ընկերության առաջանցման քաղաքանության մշակման գործընթացում:<br>զ. ճիշտ է իրականացնում մարքեթինգային գործունեության վերահսկողություն: |
| **«ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԿՈՄ 5-11-006 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսված է կոմերսանտի պատրաստման համար: Այս մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել կոմերսանտին անհրաժեշտ կառավարման մոտեցումներ, մտածելակերպ, կառավարման գործընթացի իմացություն, կառավարման գործիքակազմի և մեթոդների իմացություն և գործնական կիրառման նախնական հմտություններ: Ավարտելով այս մոդուլը ուսանողը կկարողանա բնորոշել առևտրային գործունեության տեսանկյունից կառավարման դերը, խնդիրները, սկզբունքները, գործառույթները, գործիքները, դրանց կիրառման մեթոդներն ու առանձնահատկությունները, ինչպես նաև կկարողանա հստակ պատկերացնել իր իրավասությունների ու պարտականությունների շրջանակը կազմակերպության առևտրային գործունեության մեջ: |

| | |
|---|---|
| **Մոդուլի տևողությունը** | 54 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն |
| **Մոդուլի գնահատման կարգը** | ոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Ներկայացնել կառավարման էությունը, մեթոդաբանությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում կառավարման անհրաժեշտությունը առևտրային գործընթացներում,<br>բ. ճիշտ է ներկայացնում կառավարման մեթոդաբանությունը և սկզբունքները,<br>գ. ճիշտ է բնութագրում կազմակերպության կառավարման մակարդակները: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Բնորոշել կառավարման ներքին և արտաքին միջավայրերը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության հիմնական ենթահամակարգերը,<br>բ. ճիշտ է բնութագրում կազմակերպության արտաքին միջավայրը,<br>գ. ճիշտ է բնութագրում կազմակերպության ուղղակի ներգործության միջավայրը,<br>դ. ճիշտ է բնութագրում կազմակերպության անուղղակի ներգործության միջավայրը: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Բնորոշել կառավարման գործառույթները և մեթոդները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում գործառույթների առանձին տեսակների էությունը և դասակարգումը,<br>բ. ճիշտ է ներկայացնում գործարարության ծրագիրը,<br>գ. ճիշտ է բնորոշում կառավարման տնտեսական մեթոդների էությունը,<br>դ. ճիշտ է ներկայացնում կառավարման վարչակազմակերպական մեթոդները,<br>ե. ճիշտ է ներկայացնում կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդները: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Բնութագրել կառավարման կոմունիկացիաները, անձնակազմի կառուցվածքը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է բնորոշում կոմունիկացիաների դերը կառավարման համակարգում,<br>բ. ճիշտ է ներկայացնում միջանձնային և կազմակերպության կոմունիկացիաները, |

| | |
|---|---|
| | գ. ճիշտ է ներկայացնում կազմակերպության անձնակազմի կառուցվածքը,<br>դ. ճիշտ է կատարում կադրերի ընտրություն, տեղաբաշխում: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Ներկայացնել տնտեսության կառավարման պետական մարմինները և տարբեր կազմակերպաիրավական ձևերի կազմակերպությունների կառավարման առանձնահատկությունները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում տնտեսության կառավարման պետական մարմինների կազմը, գործառույթները,<br>բ. ճիշտ է բնորոշում կազմակերպությունների կազմակերպաիրավական ձևերը,<br>գ. ճիշտ է բնորոշում իշխանությունը և դրա ձևերը,<br>դ. ճիշտ է գնահատում առաջնորդի դերը կազմակերպության կառավարման գործընթացում: |
| **«ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԿՈՄ 5-11-007 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսված է կոմերսանտի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ հաշվապահական հաշվառման իրականացման, հաշվետվությունների կազմման և վերլուծությունների կատարման ուղղությամբ:<br>Ավարտելով այս մոդուլը ուսանողը կտիրապետի հաշվապահական հաշվառման վարման, ինչպես նաև հաշվետվությունների լրացման և վերլուծության հմտություններին: |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Ներկայացնել հաշվապահական հաշվառման էությունը և մեթոդը |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է սահմանում հաշվապահական հաշվառման էությունը, սկզբունքները, խնդիրները, առարկան |

| | |
|---|---|
| | և օբյեկտները,<br>բ. ճիշտ է ներկայացում հաշվապահական հաշվառման մեթոդը, դրա տարրերի համառոտ բնութագրումը,<br>գ. ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման վարման և հաշվետվությունների կազման սկզբունքները: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Բնութագրել հաշվապահական հաշվեկշիռը և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է մեկնաբանում տեղեկատվության ամփոփման և կրկնակի արտացոլման հաշվեկշռային մեթոդը, դրա դերն ու նշանակությունը,<br>բ. ճիշտ է ներկայացնում հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության կառուցվածքն ու բովանդակությունը, կազմման սկզբունքները,<br>գ. ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշիվները, դրանց կառուցվածքը, տեսակները և գրանցումներ կատարելու կարգը,<br>դ. ճիշտ է սահմանում կրկնակի գրանցման էությունը և գործառույթները: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Ներկայացնել հաշվապահական հաշվառման հաշիվների դասակարգումը. |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է բնութագրում հաշիվների դասակարգումը ըստ տնտեսական բովանդակության և կառուցվածքի,<br>բ. ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման հաշիվների պլանի էությունը, կառուցվածքը և բովանդակությունը: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Ներկայացնել պաշարների հաշվառումը, պարտավորությունների , եկամուտների և ծախսերի հաշվառումը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում պաշարների դասակարգումն ու գնահատումը,<br>բ. ճիշտ է ներկայացնում պաշարների անընդհատ և պարբերաբար կատարվող գրանցումները,<br>գ. ճիշտ է ներկայացնում է պատրաստի արտադրանքի գնահատումը, |

| | |
|---|---|
| | դ. ճիշտ է  սահմանում է պաշարների  վերագնահատման  և  գույքագրման  արդյունքների  հաշվառումը,<br>ե. ճիշտ է  մեկնաբանում պարտավորությունների  դասակարգումը,<br>զ.  ճիշտ  է   ներկայացնում  երկարաժամկետ   ու  կարճաժամկետ  վարկերի  և  փոխառությունների հաշվառումը,<br>է. ճիշտ է  բնութագրում  գործառնական  եկամուտների  և ծախսերի  դասակարգումն ու հաշվառումը: |
| **Ուսումնառության  արդյունք  5** | Ներկայացնել  դեբիտորական պարտքի հաշվառումը. |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է  բնութագրում   դեբիտորական  պարտքերի  դասակարգումն  ու  գնահատումը,<br>բ. ճիշտ է տարբերակում անհուսալի պարտքերը  կասկածելի պարտքերից, անհուսալի պարտքերի դուրս գրումը և վերականգնումը,<br>գ. ճիշտ է  ներկայացնում կանխավճարների հաշվառումը: |
| **Ուսումնառության  արդյունք  6** | Կազմել ֆինանսական հաշվետվություններ, դրամական հոսքերի մասին հաշվետվություն |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է բնութագրում  ֆինանսական  հաշվետվության  կառուցվածքը,<br>բ. ճիշտ է   ներկայացնում   դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության պատրաստման առանձնահատկությունները: |
| **«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՈՒՄ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԿՈՄ 5-11-008 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսված է կոմերսանտի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ և անհրաժեշտ կարողություններ ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության գնահատման սկզբունքների, նպատակների, օբյեկտների, միջոցների և այլնի վերաբերյալ: Միաժամանակ՝ուսուցանել  որակի ստանդարտացման չափանիշերն ու մոտեցումները, ինչպես նաև ստանդարտացման ժամանակակից տեսությունները:<br>Ավարտելով այս մոդուլը ուսանողը ձեռք կբերի ստանդարտացման, չափագիտության և |

| | |
|---|---|
| | համապատասխանության գնահատման իրավական հիմքերի, նպատակների, խնդիրների, սկզբունքների, օբեկտների և միջոցների վերաբերյալ գիտելիքներ և անհրաժեշտ հմտություններ: Մոդուլը սովորողի մոտ կձևավորի Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման գործունեության իրավական հիմքերի և դրա մասնակիցների իրավասությունների, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի մշակման և կիրառման սկզբունքների վերաբերյալ գիտելիքներ: |
| **Մոդուլի տևողությունը** | 54 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Ներկայացնել ստանդարտացման և համապատասխանության գնահատման հետ առնչվող հիմնական հասկացությունները և ընդհանուր դրույթները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում ստարդարտցման էությունը, անհրաժեշտությունը առևտրային գործունեության տեսանկյունից,<br>բ. ճիշտ է ներկայացնում ստանդարտացման նպատակը, խնդիրները, գործառույթները, սկզբունքները,<br>գ. ճիշտ է ներկայացնում ստանդարտացման իրավական հիմքերը, ստանդարտների տեսակները,<br>դ. Ճիշտ է ներկայացնում ստանդարտների կիրառման մակարդակները,<br>ե. ճիշտ է տարբերակում արտադրանքին վերաբերվող տեխնիկական կանոնակարգերը,<br>զ. ճիշտ է ներկայացնում համապատասխանության գնահատման ձևերը: |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Ներկայացնել ստանդարտացման մեթոդները և ստանդարտացման աշխատանքների կազմակերպումը |

| | |
|---|---|
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում ստանդարտացման առարկաների կարգավորումը,<br>բ. ճիշտ է կատարում  ստանդարտացման միասնականացում և ստանդարտացման այլ սկզբունքներ,<br>գ. ճիշտ է բացատրում ստանդարտներում թույլատրելի շեղումների սահմանային արժեքը,<br>դ. ճիշտ է ներկայացնում ստանդարտացման ազգային մարմինների հիմնադրումը,<br>գ. ճիշտ է ներկայացնում ազգային մարմնի կազմակերպչական կառուցվածքը, անձնակազմը,<br>դ. ճիշտ է ներկայացնում ստանդարտացման ազգային մարմնիգործունեության շրջանակները,<br>ե. ճիշտ է ներկայացում ստանդարտացման առավելությունները ու շահավետությունը: |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Տարբերակել տեխնիկական կանոնակարգերը և ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում տեխնիկական կանոնակարգերը,<br>բ.  ճիշտ է սահմանում  տեխնիկական կանոնակարգերին ներկայացվող պահանջները,<br>գ. ճիշտ է ներկայացնում տեխնիկական կանոնակարգերի ընդունման և հաստատման ընթացակարգերը,<br>դ.ճիշտ է ներկայացնում տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի տարբերությունը,<br>ե.  ճիշտ է ներկայացնում ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի տեսակները և դրանց բնույթը,<br>զ. ճիշտ է ներկայացնում ստանդարտացման սկզբունքը: |
| **ՈՒսումնառության արդյունք 4** | Գնահատել համապատասխանությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում համապատասխանության գնահատման ձևերը,<br>բ.  ճիշտ է ներկայացնում համապատասխանության գնահատման նպատակը: |
| **ՈՒսումնառության արդյունք 5** | Տիրապետել համապատասխանության հավաստման հասկացությանը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում  համապատասխանության հավաստման հասկացությունը,<br>բ. ճիշտ է ներկայացնում համապատասխանության հավաստման ձևերը,<br>գ. ճիշտ է ներկայացնում համապատասխանության կամավոր հավաստում և պարտադիր հավաստում |

| | |
|---|---|
| | ձևերը,<br>դ. ճիշտ է ներկայացնում համապատասխանության սերտիֆիկատը, հայտարարագիրը և նշանը,<br>ե. ճիշտ է ներկայացնում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի և ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը: |
| **ՈՒսումնառության արդյունք 6** | Բնորոշել արտադրանքի սերտիֆիկացման մարմինները և փորձարկման լաբորատորիաները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում սերտիֆիկացման մարմիններ հասկացությունը,<br>բ. ճիշտ է ներկայացնում փորձարկման լաբորատորիաներ հասկացությունը,<br>գ. ճիշտ է ներկայացնում Հայաստանի հանրապետության տարածքում համապատասխանության, պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի իրացման և ծառայությունների մատուցման պայմանները,<br>դ. ճիշտ է ներկայացնում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի՝ Հայաստանի հանրապետության տարածք ներմուծման պայմանները: |
| **«ԳՈՐԾԱՐԱՐ ԳՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԿՈՄ 5-11-009 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսված է կոմերսանտի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է ուսանողներինին գործարար գրագրության կանոնների վերաբերյալ գիտելիք տրամադրել և կրթելով այդ ուղղությամբ, նրա մեջ պատշաճ մշակույթ սերմանել և վարժեցնել, զարգացնելով համապատասխան հմտություններ:<br>Ավարտելով այս մոդուլը ուսանողը կտիրապետի գործարար գրագրությանը՝ զարգացնելով համապատասխան հմտություններ: |
| **Մոդուլի տևողությունը** | 54 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն |

| | |
|---|---|
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Բնութագրել գործարար գրագրության մշակույթի էությունը և դրա հիմնադրույթները, գործարար գրագրության ձևերը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է սահմանում գործարար գրագրության հիմունքները, էությունն ու խնդիրները,<br>բ. ճիշտ է ներկայացնում գործարար գրագրության ձևերը և արդի մեթոդները: |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Իրականացնել գրագետ ավանդական փոստային գրագրություն |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է պատկերացնում ավանդական փոստային գրագրության սկզբունքները,<br>բ. ճիշտ է  կազմում ավանդական փոստային նամակները և տիրապետում է համապատասխան գործարար էթիկայի,<br>գ. անոթ է գործարար գրագրության բնագավառում կիրառվող օժանդակ համակարգչային սոֆտին և կարողանում է այն օգտագործել: |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Իրականացնել  գրագետ էլեկտրոնային փոստային գրագրություն |
| **Կատարման չափանիշներ** | ա. տիրապետում է համակարգչային փոստային ծրագրերի հետ աշխատելու հմտություններին,<br>բ. ճիշտ է պատկերացնում էլեկտրոնային փոստային գրագրության սկզբունքները և կանոնները,<br>գ. ճիշտ է  կազմում էլեկտրոնային փոստային նամակները և տիրապետում է համապատասխան գործարար էթիկայի,<br>դ.ծանոթ է գործարար գրագրության բնագավառում կիրառվող օժանդակ համակարգչային սոֆտին և կարողանում է այն օգտագործել: |
| **ՈՒսումնառության արդյունք 4** | Օգտվել առնվազն մեկ էլեկտրոնային ձայնային հեռահաղորդակցման համակարգչային ծրագրից |
| **Կատարման չափանիշներ** | ա. տիրապետում համակարգչային  Instant messaging ծրագրի հետ աշխատելու հմտություններին,<br>բ. տիրապետում է IM համապատասխան գործարար էթիկայի: |

| «ԳՈՐԾԱՐԱՐ ԷԹԻԿԱ» | |
|---|---|
| **Մոդուլի դասիչը** | ԿՈՄ 5-11-010 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսված է կոմերսանտի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է ծանոթացնել ուսանողին գործարար էթիկայի կանոնների հետ և ձևավորել նրա մոտ համապատասխան մշակույթ: Ավարտելով այս մոդուլը ուսանողը կտիրապետի գործարար էթիկայի կանոններին, հիմնադրույթներին: |
| **Մոդուլի տևողությունը** | 36 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Ձևակերպել գործարար էթիկայի հիմնադրույթները, գիտակցել դրա կանոնների կիրառման անհրաժեշտությունը, և յուրացնել համապատասխան մշակույթը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում գործարար էթիկայի կարևորությունը առևտրային գործարքներում,<br>բ. ճիշտ է ձևակերպում առարկայի նպատակները և խնդիրները,<br>գ. Ճիշտ է ներկայացնում գործարար մշակույթը: |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Կարողանալ ձևավորել համապատասխան գործարար միջավայրի համար անհրաժեշտ էթիկայի/վարքագծի կանոնակարգ(Code of Ethics) |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում գործարար էթիկայի հիմնադրույթները,<br>բ. ճիշտ է ներկայացնում գործարար միջավայրը.<br>Գ. Ճիշտ է կողմնորոշվում համապատասխան գործարար միջավայրում: |
| «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» | |
| **Մոդուլի դասիչը** | ԿՈՄ 5-11-011 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսված է կոմերսանտի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է ուսանողին |

| | |
|---|---|
| | տալ անհրաժեշտ գիտելիքներ ՀՀ Քաղաքացիական և ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված աշխատողների իրավունքների, աշխատանքային պայմանագրերի, աշխատանքային պարտականությունների, ապրանքների մակնշավորման, սերտիֆիկացման, գնագոյացման, գովազդային գործունեության իրականացման, գնումների իրականացման, սպառողների շահերի պաշտպանության, տեղեկատվության տրամադրման և ստացման, առևտրի և ծառայությունների կազմակերպման կանոնների վերաբերյալ:<br>Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը ձեռք կբերի գիտելիքներ առևտրային հարաբերությունները կարգավորող հիմնական նորմատիվային և այլ իրավական ակտերի վերաբերյալ, կկարողանա օգտագործել անհրաժեշտ իրավական ակտերը: |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Ներկայացնել ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի և ՀՀ Աշխատանքային օրենսգրքի հիմնական դրույթները և մասնագիտական գործունեության բնագավառում իրավահարամբերությունների սուբյեկտների իրավական դիրքը, մասնագիտական գործունեության բնագավառի սուբյեկտների իրավունքները ու պարտականությունները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում ՀՀ Աշխատանքային օրենսգրքի հիմնական դրույթները՝ աշխատողների իրավունքների, աշխատանքային պայմանագրի, աշխատանքային պարտականությունների վերամբերյալ,<br>բ. ճիշտ է ներկայացնում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի դրույթները,<br>գ. ճիշտ է ձևակերպում զեկուցագրեր, տեղեկանքներ և այլ փաստաթղթեր,<br>գ. ճիշտ է ներկայացնում մասնագիտական գործունեության բնագավառում իրավահարաբերությունների սուբյեկտների իրավական դիրքը, իրավունքները ու պարտականությունները: |

| | |
|---|---|
| **Ուսումնառության արդյունք 2** | Ներկայացնել մասնագիտական գործունեության մեջ իրավահարաբերությունները կարգավորող հիմնական նորմատիվային և այլ իրավական ակտերը, մասնավորապես «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքը և ենթաօրենսդրական ակտերը, կարողանա կիրառել անհրաժեշտ իրավական ակտերը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում մասնագիտական գործունեության մեջ իրավահարամբերությունները կարգավորող հիմնական նորմատիվային և այլ իրավական ակտերի նշանակությունը որոշումների կայացման վրա,<br>բ. ճիշտ է ներկայացնում «Ապրանքների և սպասրկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին», «Արտոնագրերի մասին» , «Լիցենզավորման մասին», «Ֆիրմային անվանումների մասին», «Տնտեսական մրցակցության մասին>, «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքներիի դրույթների նշանակությունը ապրանքային քաղաքականության մշակման վրա,<br>գ. ճիշտ է ներկայացնում «Հակագնագցման և փոխհատուցման միջոցների մասին» ՀՀ օրենքի դրույթների նշանակությունը գնային քաղաքականության մշակման վրա,<br>դ. ճիշտ է ներկայացնում «Գնումների մասին» ՀՀ օրենքի դրույթների նշանակությունը վաճառահանման քաղաքականության մշակման վրա,<br>ե. Ճիշտ է ներկայացնում «Գովազդի մասին», «Զանգվածային լրատվության միջոցների մասին» և «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքներիի դրույթների նշանակությունը առաջանցման քաղաքականության մշակման վրա,<br>զ. ճիշտ է կիրառում անհրաժեշտ իրավական ակտերը կոնկրետ իրավիճակներում: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Ներկայացնի ՀՀ-ում սպառողների իրավունքների պաշտպանության մասին օրենսդրությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի դրույթների նշանակությունը<br>բ. Ճիշտ է ներկայացնում սպառող-վաճառող շղթայում կոմերսանտի գործունեությունը, |

| | |
|---|---|
| | գ. ճիշտ է ներկայացնում սպառողների և վաճառողների միջև ապրանքների վաճառքի ժամանակ ծագած հարաբերությունները,<br>դ. ճիշտ է ներկայացնում անվտանգ ապրանքների ձեռքբերման սպառողի իրավունքները և դրանց իրականացման մեխանիզմը: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Ներկայացնի ապրանքների անվտանգությունը կանոնակարգող օրենսդրությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում ապրանքների անվտանգությունը սահմանող պահանջները,<br>բ. ճիշտ է ներկայացնում մակնիշավորումը կանոնակարգող օրենսդրության պայմանները,<br>գ.ճիշտ է ներկայացնում ապրանքների համապատասխանության գնահատման ընթացակարգերը: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Ներկայացնի առևտրային գործունեության իրականացման համար անհրաժեշտ հարկային պարտավորությունները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում պարտադիր վճարման ենթակա հարկերը, դրանց իրավական հիմքերը,<br>բ. ճիշտ է իրականացնում հարկային ձևակերպումները,<br>գ. ճիշտ է ներկայացնում պարտադիր սոցիալական վճարները, դրանց իրավական հիմքերը: |
| **«ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԿՈՄ 5-11-012 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսված է կոմերսանտի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել կարողություններ առևտրային քաղաքականության մշակման, իրագործման և արդյունավետության գնահատման, մասնավորապես՝ վաճառահանման մեթոդների մշակման, վաճառահանման շղթայի կառավարման աշխատանքների կազմակերպման ու կառավարման ուղղությամբ:<br>Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել կարողություններ Հայաստանի Հանրապետության տարածքում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտի կառավարման |

| | |
|---|---|
| | հիմքերի, առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացվող գործունեության կանոնակարգման, ինչպես նաև սպառողների իրավունքների պաշտպանության ապահովման վերաբերյալ: |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԿՈՄ 5-11-11 «Մասնագիտական գործունեության բնագավառի իրավագիտություն» մոդուլը |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Բնորոշել առևտրային կազմակերպություն հասկացությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում առևտրային կազմակերպություն հասկացությունը,<br>բ. ճիշտ է ներկայացնում առևտրային կազմակերպությունների տեսակները,<br>գ. ճիշտ է գնահատում առևտրային կազմակերպություպությունների պարտավորությունները: |
| **Ուսումնառության արդյունք 2** | երկայացնել մանրածախ և մեծածախ առևտրի բնութագրումը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում առևտուր հասկացությունը,<br>բ. ճիշտ է ներկայացնում մանրածախ առևտուր հասկացությունը,<br>գ, ճիշտ է ներկայացնում մեծածախ առևտուր հասկացությունը: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Բնութագրել առևտրի օբյեկտներ և առևտրի իրականացման վայրեր հասկացությունները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում առևտրի օբյեկտ հասկացությունը, դրանց տեսակները,<br>բ. ճիշտ է ներկայացնում առևտրի իրականացման վայր հասկացությունը, դրանց տեսակները, առևտրի իրականացման վայրի կազմակերպչին ներկայացվող պահանջները:<br>գ. ճիշտ է տարբերակում առևտրի օբյեկտները առևտրի իրականացման վայրերից: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Թվարկել առևտրի օբյեկտներին ներկայացվող պահանջները |

| | |
|---|---|
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում առևտրի օբյեկներին ներկայացվող պահանջները,<br>բ. ճիշտ է ներկայացնում վաճառողին ներկայացվող պահանջները,<br>գ. ճիշտ է ներկայացնում բացօթյա առևտրին ներկայացվող պահանջները,<br>դ.ճիշտ է կարգավորում առևտրային գործարքներում, տարբեր՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված, ծագող վեճերը : |
| **«ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐՈՒՐ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԿՈՄ 5-11-013 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսված է կոմերսանտի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել կարողություններ մանրածախ առևտրի կազմակերպման ձևերի, գործընթացի, ոլորտի կառավարման հիմքերի, ոլորտում իրականացվող գործունեության կանոնակարգման, ինչպես նաև պառողների իրավունքների պաշտպանության ապահովման վերաբերյալ:<br>Ավարտելով այս մոդուլ ուսանողը կստանա գիտելիքներ մանրածախ առևտրում առևտրի օբյեկտների և առևտրի իրականացման վայրերի տեսակների հստակ սահմանման, դրանց աստիճանական դասակարգման, հանրապետության տարածքում առևտրի խոշոր օբյեկտների տեղաբաշխման, ինչպես նաև առևտրի օբյեկտների և առևտրի իրականացման վայրերի հստակ տարբերակման վերաբերյալ: |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԿՈՄ 5-11-13 «Առևտրային գործունեություն» մոդուլը |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Ներկայացնել մանրածախ առևտրի կազմակերպման սկզբունքները |
| **Կատարման չափանիշներ** | ա. Ճիշտ է ներկայացնում մարնրածախ առևտրի բնութագրումը ւ նշանակությունը,<br>բ. ճիշտ է ներկայացնում մանրածախ առևտրի կազմակերպման կանոնները: |

| | |
|---|---|
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ մանրածախ առևտրի տեսակները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում մանրածախ առևտրի կազմակերպման կանոնները,<br>բ. ճիշտ է թվարկում մանրածախ առևտրի իրականացման համար նախատեսված առևտրի օբյեկտները,<br>գ.ճիշտ է ներկայացնում մանրածախ առևտրում վաճառողին և աշխատողին ներկայացվող պահանջները,<br>դ.ճիշտ է ներկայացնում բացօթյա առևտրին ներկայացվող պահանջները,<br>ե. ճիշտ է տալիս առևտրի իրականացման վայրերի տեսակների բնութագրումը,<br>զ. ճիշտ է ներկայացնում խանութ, կրպակ, տաղավար, հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի առևտրի կետեր, առևտրի կենտրոններ, սպառողական ապրանքների, գյուղատնտեսական արտադրանքի և կենդանիների շուկաներ, տոնավաճառներ, բացօթյա առևտրի վայրերի, շրջիկ առևտրի կետերի, շրջածախ առևտրի, էլեկտրոնային կապի, դիլերների միջոցով և ավտոմատներով, հիպերմարկետ առևտրի օբյեկտները: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Ներկայացնել մանրածախ առևտրում ապրանքների գնային քաղաքականությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է տարբերակում մանրածախ առևտրի օբյեկտները ՝ ըստ ապրանքների գների,<br>բ . ճիշտ է ներկայացնում իջեցված գներով առևտրի օբյեկտների հատկանիշները, դրանց տեսակները,<br>Գ. ճիշտ է ներկայացնում ունիվերսամ , խանութ-պահեստ, առևտրի օբյեկտ հասկացությունը: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Ներկայացնել առևտրի իրականացման վայրերի բնութագրումը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում առևտրի իրականացմանվայրերի տեսակները,<br>բ. ճիշտ է ներկայացնում առևտրի իրականացման վայրի կազմակերպչին ներկայացվող պահանջները: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Ներկայացնել առևտրի օբյեկտների և առևտրի իրականացման վայրերի դասակարգումը ըստ տիպերի և աստիճանների |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է դասակարգում առևտրի օբյեկտները և առևտրի իրականացման վայրերը կախված զբաղեցրած տարածքից և սպասարկվող բնակչության ծավալներից,<br>բ. ճիշտ է ներկայացնում փոքր, միջին, խոշոր առևտրի օբյեկտներ և առևտրի իրականացման վայրեր բնութագրումը՝ կախված զբաղեցրած տարածքից և բնակչության թվաքանակից,<br>գ. ճիշտ է դասակարգում առևտրի օբյեկտները և առևտրի իրականացման վայրերը, տեղակայման բնակելի տարածքներից (թաղ, համայնք, քաղաք, մարզ) և վաճառվող ապրանքների նկատմամբ |

| | |
|---|---|
| | պահանջարկից կախված,<br>դ. ճիշտ է ներկայացնում առաջին, երկրորդ, երրորդ աստիճանի առևտրի օբյեկտները և առևտրի իրականացման վայրերը: |
| **«ՄԵԾԱԾԱԽ ԱՌԵՎՏՈՒՐ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԿՈՄ 5-11-014 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսված է կոմերսանտի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել կարողություններ մեծածախ առևտրի կառավարման հիմքերի, մեծածախ առևտրի ձևերի, ոլորտում իրականացվող գործունեության կանոնակարգման վերաբերյալ:<br>Ավարտելով այս մոդուլը ուսանողը կստանա գիտելիքներ մեծածախ առևտրում առևտրի կանոնների, մեծածախ առևտրի մասնակիցների, մեծածախ վաճառք իրականացնող առևտրային կազմակերպությունների տեսակների մասին: |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԿՈՄ 5-11-13 «Մանրածախ առևտուր» մոդուլը: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Ներկայացնել մեծածախ առևտրի բնութագրումը և նշանակությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում մեծածախ առևտրային գործունեությունը,<br>բ. ճիշտ է մեկնաբանում մեծածախ վաճառքի մասնակիցների պարտականությունները,<br>գ. ճիշտ է ներկայացնում մեծածախ առևտրում ապրանքային տեսականու ձևավորումը,<br>դ. ճիշտ է ներկայացնում մեծածախ առևտրում ապրանքների պահեստավորման, տեղափոխման պայմանները, |

| | |
|---|---|
| | ե. ճիշտ է ներկայացնում մեծածախ առևտրում խորհրդակցական ծառայությունների մատուցումը: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Թվարկել մեծածախ առևտրի օբյեկտների տեսակները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում մեծածախ-վաճառող հասկացությունը,<br>բ. ճիշտ է ներկայացնում մեծածախ-վաճառող գործունեության կառուցվածքը: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Բնորոշել բրոքերներ և գործակալներ հասկացությունը. |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում բրոքերի աշխատանքային գործունեությունը,<br>բ. ճիշտ է ներկայացնում բրոքերի աշխատանքային ոլորտը,<br>գ. ճիշտ է ներկայացնում գործակալի դերը և աշխատանքային գործունեության ոլորտը,<br>դ. ճիշտ է տարբերակում գործակալի աշխատանքային պարտականությունները ըստ հետևյալ տեսակների. արտադրության գործակալ, վաճառքի գործակալ, գնման գործակալ: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Ներկայացնել մեծածախ առևտրային կազմակերպության շուկայական քաղաքականությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. Ճիշտ է տարբերակում մեծածախ ատևտրային կազմակրպության տեսակը՝ ըստ ապրանքային տեսականու, մատուցվող ծառայության,<br>բ. Ճիշտ է տարբերակում մեծածախ առևտրային գործունեությունը՝ ըստ գնային քաղաքականության: |
| **«ԱՌԵՎՏՐԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԿՈՄ 5-11-015 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսված է կոմերսանտի պատրասատման համար: Մոդուլի նպատակն է ուսանողին տալ անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ առևտրային գործունեության բնագավառում կիրառվող սարքավորումների, մեքենաների շահագործման և օգտագործման ժամանակ:<br>Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կկարողանա գրագետ ձևով օգտվել և շահագործել առևտրի սարքավորումները: |
| **Մոդուլի տևողությունը** | 36 ժամ |

| | |
|---|---|
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԿՈՄ 5-11-14 «Մեծածախ առևտուր» մոդուլը: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Ներկայացնել մեքենաների և սարքավորումների անհրաժեշտությունը և նշանակությունը առևտրային կազմակերպությունում |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում սարքավորումների դերը արդյունավետ առևտրային գործունեություն կազմակերպելու տեսանկյունից,<br>բ. ճիշտ է ներկայացնում առևտրի սարքավորումների տեսակները, կազմը,<br>գ. ճիշտ է ներկայացնում սարքավորումների անհրաժեշտությունը պահեստներում,<br>դ. ճիշտ է ձևակերպում պահանջվող սարքավորումների քանակը, տեսակները: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Ներկայացնել տրանսպորտի տեսակների օգտագործման արդյունավետությունը առևտրային գործընթացներում |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է բնութագրում հիմնական տրանսպորտային միջոցները,<br>բ. ճիշտ է ներկայացնում բեռների երկաթուղիով փոխադրման արդյունավետությունը ,<br>գ. ճիշտ է ներկայացնում բեռների ավտոմոբիլային փոխադրումների կազմակերպումը,<br>դ. ճիշտ է ներկայացնումբեռների փոխադրումը օդային տրանսպորտով: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Ներկայացել սարքավորումների դերը պահեստներում |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում պահեստների գործառույթները և դասակարգումը,<br>բ. ճիշտ է մեկնաբանում տեխնոլոգիական գործընթացը պահեստներում,<br>գ. ճիշտ է ներկայացնումպահեստների տեխնոլոգիական սարքավորումների դասակարգումը: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Ներկայացնել ավտոմատացված առևտրի սարքերի օգտագործման նպատակահարմարությունը |

| | |
|---|---|
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում ավտոմատացված առևտրի սարքերի կիրառման անհրաժեշտությունը միջին և խոշոր կազմակերպություններում,<br>բ. ճիշտ է գնահատում ամբարձիչների, բեռնիչների, էլեկտրասայլակների տրանսպորտային և հարահոսքային համակարգերի օգտագործումը:<br>գ. ճիշտ է ներկայացնում պահեստային տնտեսության լրիվ ավտոմատացման նշանակությունը փաստաթղթերի մշակման, պատվերների խմբավորման և նմանատիպ խնդիրների լուծման տեսանկյունից:: |
| **«ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԿՈՄ 5-11-016 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսված է կոմերսանտի պատրասատման համար: Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել կարողություններ ապրանքների և ծառայությունների իրացման գործընթացում պայմանագրերի և բազմաթիվ համաձայնագրերի կնքման և կատարման բավարար գիտելիքներ և կարողություններ:<br>Ավարտելով այս մոդուլը ուսանողը կկարողանա ձևավորել կարողություններ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտի կառավարման հիմքերի, առևտրի և ծառայությունների ոլորտում պայմանագրային հիմունքներով իրականացվող գործունեության կանոնակարգման վերաբերյալ: |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԿՈՄ 5-11-15 «Առևտրի սարքավորումներ» մոդուլը: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |

| | |
|---|---|
| **Ուսումնառության արդյունք 1** | Ներկայացնել ապրանքների առուվաճառքի պայմանագրերի բովանդակությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում ապրանքների առուվաճառքի պայմանագրերին ներկայացվող պահանջները,<br>բ. ճիշտ է կատարում արտահանման-ներմուծման գործարքների ձևակերպումն ու կնքումը,<br>գ. ճիշտ է ներկայացնում ապրանքների առուվաճառքի տիպային պարտավորագրերը: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Ներկայացնել ապրանքների առուվաճառքի պայմանագրերում կիրառվող գները և վճարման ձևերը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է տարբերակում ապրանքների շարժը և իրացման համակարգը,<br>բ. ճիշտ է ներկայացնում պայմանագրային գների սահմանման մեթոդները,<br>գ. ճիշտ է սահմանում գները,<br>դ. ճիշտ է ներկայացնում առևտրային գործարքներում կիրառվող վճարման ձևերն ու եղանակները: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Տիրապետել առուվաճառքի պայմանագրերի առանձնահատկություններին |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում ապրանքների առուվաճառքի պայմանագրերի տարբերությունների առաջացման պատճառները,<br>բ. ճիշտ է ներկայացնում առուվաճառքի պայմանագրերի առանձնահատկությունները,<br>գ.ճիշտ է ներկայացնում անշարժ և շարժական գույքի առուվաճառքի պայմանագրերի առանձնահատկությունները: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Ներկայացնել ապրանքների առուվաճառքի ժամանակ կիրառվող այլ պայմանագրերը և փաստաթղթերը |
| **Կատարման չափանիշներ** | ա. Ճիշտ է ներկայացնում առևտրային բեռների տրանսպորտային-էքսպեդիտորական սպասարկման պայմանագրերը,<br>բ. Ճիշտ է ներկայացնում ֆրանչայզինգի համաձայնագիրը,<br>գ. Ճիշտ է ձևակերպում առուվաճառքի հարաբերությունների կարգավորման երաշխիքային փաստաթղթերը: |
| **«ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԿՌՄ 5-11-017 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսված է կոմերսանտի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է ուսանողի |

| | |
|---|---|
| | մոտ ձևավորել բավարար չափով գիտելիքներ և ունակություններ տրամադրել ապրանքների և ծառայությունների վաճառքի հաղորդակցության տեսության վերաբերյալ:<br>Ավարտելով այս մոդուլը ուսանողը կտիրապետի վաճառքի հաղորդակցման էությանը, դրա խնդիրներին, տեխնիկային և արդյունավետորեն կկիրառի դրանք: |
| **Մոդուլի տևողությունը** | 54 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԿՈՄ 5-11-16 «Առուվաճառքի պայմանագրային գործունեության հմտություններ» մոդուլը: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Բնորոշել վաճառքի հաղորդակցության տեսություն առարկայի էությունն ու խնդիրները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում վաճառքի հաղորդակցության առարկան և հիմնական սահմանումները,<br>բ. ճիշտ է գիտակցում վաճառքի ընթացքում գրագետ և արդյունավետ հաղորդակցության կարևորությունը,<br>գ. ճիշտ է ներկայացնում վաճառքի հաղորդակցության տեսակները և նրանց կապը այլ գիտությունների հետ,<br>դ. ճիշտ է սահմանում վաճառքի հաղորդակցության միջոցներով լուծվող խնդիրները: |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Սահմանել վաճառքի ոչ վերբալ հաղորդակցության տեխնիկաները և արդյունավետ կիրառել դրանք |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում ոչ վերբալ հաղորդակցության տեսակները,<br>բ. ճիշտ է նկարագրում “մարմնի լեզվի” տարրերը և նրանց տեսակները, այդ թվում՝<br>բ1. մարմնի դիրքի առումով,<br>բ2. շարժ ու ձևի առումով,<br>բ3. դեմքի միմիկայի առումով, |

| | |
|---|---|
| | բ4. հայացքի առումով,<br>բ5. մայլվածքի առումով:<br>գ. ճիշտ է ներկայացնում ոչ վերբալ հաղորդակցության ընդունված գոտիները և հասկանում է նրանց ճիշտ կիրառման կանոնները<br>դ. ճիշտ է ներկայացնում հայացքի տեսակները և հասկանում է դրանց ճիշտ կիրառման կանոնները: |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Սահմանել վաճառքի վերբալ հաղորդակցության տեխնիկաները և արդյունավետ կիրառել դրանք |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում վաճառքի լեզվի մշակույթի կարևորությունը և արդյունավետ վաճառքի վրա դրա ազդեցության աստիճանը,<br>բ. ճիշտ է ներկայացնում վերբալ հաղորդակցության կանոնները,<br>գ. ճիշտ է ներկայացնում վերբալ հաղորդակցության ընթացքում կիրառվող հարցերի տեսակները: |
| **ՈՒսումնառության արդյունք 4** | Բնորոշել վաճառքի վերբալ հեռահաղորդակցության տեսակները և արդյունավետ կիրառել դրանք |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում հեռախոսային հաղորդակցության մշակույթի կարևորությունը և արդյունավետ վաճառքի վրա նրա ազդեցության աստիճանը,<br>բ. ճիշտ է ներկայացնում հեռախոսային հաղորդակցության կանոնները,<br>գ. ճիշտ է կարողանում կառուցել խոսակցության սխեման, հմտորեն կիրառելով համապատասխան տեխնիկաները: |
| **«ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՆՈՐԴԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԿՈՄ 5-11-018 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսված է կոմերսանտի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է ուսանողներին սովորեցնել առևտրային միջնորդային գործառնությունները, դրանց խնդիրները, գործառնությունների կազմակերպման ձևերը, տեսակները, ինչպես նաև միջնորդների հետ կնքվող համաձայնագրերի տեսակները, առանձնահատկությունները: |

| | |
|---|---|
| | Ավարտելով այս մոդուլը ուսանողը կկարողանա իրականացնել միջնորդային գործառնություններ՝ տիրապետելով միջնորդների հետ կնքվող համաձայնագրերի տեսակներին և առանձնահատկություններին: |
| **Մոդուլի տևողությունը** | 36 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԿՈՄ 5-11-17 «Վաճառքի հաղորդակցություն» մոդուլը: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Բնորոշել առևտրամիջնորդային գործառնությունների էությունը և առանձնացնել խնդիրները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է բնորոշում առևտրային միջնորդներին, առանձնացնում է դրանց մակարդակները և տեսակները,<br>բ. ճիշտ է ներկայացնում առևտրամիջնորդային գործառնությունները,<br>գ. ճիշտ է ընկալում առևտրամիջնորդային գործառնություններում առաջացած խնդիրները,<br>դ. ճիշտ է բնորոշում առևտրամիջնորդ կազմակերպությունների գործառույթները: |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Կազմակերպել է առևտրամիջնորդային գործառնություններ |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է բնորոշում առևտրամիջնորդային ֆիրմաների տեսակները (առևտրական, կոմիսիոն, գործակալային, բրոքերային, ֆեկտոր),<br>բ. ճիշտ է ներկայացնում առևտրամիջնորդային գործառնությունների կազմակերպական ձևերը և տեսակները,<br>գ. ճիշտ է լուծում առևտրամիջնորդային գործառնություններում առաջացած խնդիրները,<br>դ. ճիշտ է հաշվարկում առևտրային միջնորդային գործունեության արդյունավետությունը: |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Կիրառել միջնորդների հետ կնքվող տարբեր տեսակի համաձայնագրեր |

| | |
|---|---|
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է կիրառում առևտրամիջնորդային տարբեր գործառնությունների իրականցման համար կնքվող համաձայնագրերը,<br>բ. ճիշտ է գնահատում առևտրամիջնորդային համաձանագրի պայմանները,<br>գ. ճիշտ է գնահատում տարբեր տեսակի համաձայնագրերի արդյունավետությունը: |
| **«ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԿՈՄ 5-11-019 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսված է կոմերսանտի պատրասատման համար: Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել առևտրային տեղեկատվության ձեռք բերման, առևտրային գաղտնիքի պաշտպանության, ինչպես նաև շուկայական առաջարկը պատշաճ մակարդակով ներկայացնելու, քարոզելու, ԶԼՄ-ների, սպառողների շահերի պաշտպանության կազմակերպությունների և այլ հաստատությունների հետ շփվելու, կապեր ստեղծելու կարողություններ:<br>Ավարտելով այս մոդուլը ուսանողը կկարողանա իրականացնել ընկերության համար շահավետ տեղեկատվության տարածում և քարոզչություն, ընկերությանը ներկայացնել ցուցահանդես վաճառքների, շնորհանդեսների և ցուցահանդես տոնավաճառների ընթացքում, գործընկերային կապեր ստեղծել և ամրապնդել: |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԿՈՄ 5-11-18 «Ապրանքների առուվաճառքի միջնորդային գործարքների հմտություններ» մոդուլը: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Գնահատել առևտրային տեղեկատվության դերը և նշանակությունը առևտրային կազմակերպության համար |

| | |
|---|---|
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում առևտրային տեղեկատվության նշանակությունը ընկերության սահմանած նպատակների իրականացման համար,<br>բ. ճիշտ է գնահատում կիրառված միջոցառումներից յուրաքանչյուրի ֆիզիկական արդյունավետությունը,<br>գ,ճիշտ է մեկնաբանում §առևտրային տեղեկատվություն¦ և §առևտրային գաղտնիք¦ հասկացությունները,<br>դ. ճիշտ է իրականայացնում առևտրային գաղտնիքի պաշտպանությանն ուղղված միջոցառումները, |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Մշակել սպառողների շահերի պաշտպանության ապահովման եղանակներ |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումների ձևերը և դրանցից յուրաքանչյուրի կիրառման ուղղությունները,<br>բ. ճիշտ է առանձնացնում սպառողների իրավունքների պաշտպանության պետական և հասարակական մարմինները: |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Աշխատել կոնտակտային լսարանների հետ և ներկայացնել ընկերության պաշտոնական տեսակետը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում կոնտակտային լսարանների հետ աշխատանքի յուրահատկությունները,<br>բ.ճիշտ է ներկայացնում ընկերության պաշտոնական դիրքորոշումը տարբեր կոնտակտային լսարանների հետ աշխատելիս: |
| **ՈՒսումնառության արդյունք 4** | Ներկայացնել հասարակայնության հետ կապերի արժեքավորությունը առևտրային գործունեության և վաճառքի տեսանկյունից |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է սահմանում շնորհանդեսների, ցուցահանդես վաճառքների և տոնավաճառների նշանակությունը ընկերության և դրա շուկայական առաջարկի առաջանցման գործում,<br>բ.ճիշտ է ներկայացնում շնորհանդեսների, ցուցահանդես վաճառքների և տոնավաճառների կազմակերպման և դրանցում ընկերության ներկայացման յուրահատկությունները,<br>գ. ճիշտ է արձագանքում ցուցահանդես վաճառքների և տոնավաճառների կազմակերպման վերաբերյալ տեղեկատվությանը և պատշաճ մակարդակով ներկայացնում է ընկերությունը դրանցում: |
| **ՈՒսումնառության արդյունք 5** | Գնահատել կիրառված միջոցառումների ֆիզիկական արդյունավետությունը |

| | |
|---|---|
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում հասարակայնության հետ կապերի առանձին միջոցառումների ընտրության և ընկերության սահմանած նպատակների միջև առկա կապը,<br>բ. ճիշտ է գնահատում կիրառված միջոցառումներից յուրաքանչյուրի ֆիզիկական արդյունավետությունը: |
| | **«ԳՈՎԱԶԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ»** |
| **Մոդուլի դասիչը** | ԿՈՄ 5-11-020 |
| **Մոդուլի տևողությունը** | 54 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԿՈՄ 5-11-19 «Առևտրային տեղեկատվության ստացման և հաղորդակցման հմտություններ» մոդուլը: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Բնութագրել գովազդի դերը և նշանակությունը ապրանքների և ծառայությունների առաջանցման համալիրում |
| **Կատարման չափանիշներ** | ա. Ճիշտ է ներկայացնում գովազդի առանձին տեսակների դասակարգումը,<br>բ. ճիշտ է ներկայացնում գովազդի առանձին տեսակների նշանակությունը ապրանքների և ծառայությունների կենսապարբերաշրջանի առանձին փուլերում,<br>գ. ճիշտ է ներկայացնում գովազդի առանձնահատկությունները,<br>դ. ճիշտ է ընտրում յուրաքանչյուր ապրանքատեսակի գովազդման արդյունավետ միջոցը և կրիչը: |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Կատարել գովազդային հետազոտություններ |
| **Կատարման չափանիշներ** | ա. Ճիշտ է կատարում գովազդ սպառողների ուսումնասիրությունը,<br>բ. ճիշտ է կատարում գովազդի շուկայի ուսումնասիրություն,<br>գ. ճիշտ է կատարում ապրանքի ուսումնասիրություն: |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Իրականացնել գովազդային միջոցի ընտրության արդյունավետության գնահատում |

| | |
|---|---|
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է գնահատում գովազդի միջոցի արդյունավետությունը,<br>բ. ճիշտ է ընտրում ապրանքի կենսապարբերաշրջանի տարբեր փուլերում կիրառվող գովազդի տեսակը,<br>գ. ճիշտ է գնահատում կիրառված գովազդի յուրաքանչյուր տեսակի ֆիզիկական արդյունավետությունը,: |
| **«ՎԱՃԱՌՔԻ ԽԹԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԿՈՄ 5-11-021 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսված է կոմերսանտի պատրաստման համար: Այս մոդուլի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել շուկայական առաջարկի իրացումը խթանելու կարողություններ:<br>Ավարտելով այս մոդուլը ուսանողը կկարողանա կազմակերպության համար իրականացնել վաճառքի խթանման կարճաժամկետ միջոցառումներ: |
| **Մոդուլի տևողությունը** | 54 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԿՈՄ 5-11-20«Գովազդի կազմակերպում» մոդուլը: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Ներկայացնել վաճառքի խթանման դերը և անհրաժեշտությունը ապրանքների և ծառայությունների իրացման գործում |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում վաճառքի խթանման նշանակությունը առևտրային կազմակերպության համար,<br>բ. ճիշտ է ներկայացնում վաճառքի խթանման առանձնահատկությունները ապրանքի կենսա-պարբերաշրջանի ներդրման փուլում,<br>գ. ճիշտ է ներկայացնում վաճառքի խթանման առանձնահատկությունները ապրանքի կենսա- |

| | |
|---|---|
| | պարբերաշրջանի հագեցման փուլում: |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Մշակել զեղչերի իրականացման և իրացման խթանման միջոցառումներ |
| **կատարման չափանիշներ** | գ. ճիշտ է ներկայացնում վաճառքի խթանման միջոցառումների ձևերը և դրանցից յուրաքանչյուրի կիրառման ուղղությունները,<br>բ. ճիշտ է որոշում զեղչերի կիրառման ուղղությունները և զեղչի սահմանման նպատակային չափը,<br>գ. ճիշտ է մշակում վաճառքի խթանման միջոցառումներ սպառողների, միջնորդների և աշխատակիցների համար: |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Գնահատել վաճառքի խթանման միջոցառումների արդյունավետությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում վաճառքի խթանման միջոցառումների արդյունավետության գնահատման մոտեցումները,<br>բ. ճիշտ է գնահատում վաճառքի ßÕÃ³ÛÇ առանձին տարրերի խփանման նշանակությունը,<br>գ. ճիշտ է գնահատում վաճառահանման գործընթացի խթանման արդյունավետությունը: |
| **«ԱՆՀԱՏԱԿԱՆ ՎԱՃԱՌՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԿՈՄ 5-11-022 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսված է կոմերսանտի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել կայուն գործընկերային հարաբերությունների հաստատման, հաճախորդների սպասարկման, պատվերային արտադրության կազմակերպման, ցանցային մարքեթինգի սկզբունքով վաճառքի կազմակերպման հմտություններ:<br>Ավարտելով այս մոդուլը ուսանողը կկարողանա հաստատել գործընկերային հարաբերություններ, ձևավորել անհատական վաճառքի ցանցեր, իրականացնել ապրանքների և ծառայությունների անհատական արտադրության պատվերներ |
| **Մոդուլի տևողությունը** | 54 ժամ |

| | |
|---|---|
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԿՈՄ 5-11-21«Վաճառքի խթանման կազմակերպում» մոդուլը |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Առևտրային միջնորդների հետ հաստատել գործընկերային հարաբերություններ |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում առևտրային միջնորդների հետ գործընկերային հարաբերությունների հաստատման նշանակությունը,<br>բ. ճիշտ է բացահայտում նպատակային միջնորդներին և նրանց հետ հաստատում կայուն, արդյունավետ հարաբերություններ: |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | պասարկել կորպորատիվ հաճախորդներին և նրանցից ընդունել ապրանքների արտադրության անհատական պատվերներ |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է բնորոշում կազմակերպության կորպորատիվ հաճախորդներին և նրանց սպասարկման առանձնահատկությունները.<br>բ. ճիշտ է բնորոշում կորպորատիվ հաճախորդներից պատվերների ստացման և դրանք կազմակերպության հնարավորությունների հետ համադրելու գործընթացը.<br>գ. ճիշտ է սպասարկում կազմակերպության կորպորատիվ հաճախորդներին և ներգրավում է նոր արտադրական պատվերներ: |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | ՈՒղղակի մարքեթինգի սկզբունքով ձևավորել սեփական վաճառքի ցանց |
| **Կատարման չափանիշներ** | ա. Ճիշտ է ներկայացնում ուղղակի մարքեթինգը,<br>բ. ճիշտ է ներկայացնում անհատական վաճառքի ձևերը,<br>գ. ճիշտ է հիմնավորում իրացման ծավալների աճին ուղղված սեփական իրացման ցանց ստեղծելու գաղափարը: |

| «Մերչանդայզինգ» | |
|---|---|
| **Մոդուլի դասիչը** | ԿՈՄ 5-11-023 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսված է կոմերսանտի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է, հաշվի առնելով մերչանդայզինգի կարևորության աստիճանը ժամանակակից գործարարության մեջ, ուսանողներին սովորեցնել ապրանքների վաճառքի մեթոդներ՝ մերչանդայզինգի հիմնական սկզբունքներով և տեխնոլոգիաներով:<br>Ավարտելով այս մոդուլը ուսանողը կկարողանա իրականացնել մերչանդայզինգային գործողություններ՝ տիրապետելով մերչանդայզինգի հիմնական սկզբունքներին և տեխնոլոգիաներին: |
| **Մոդուլի տևողությունը** | 54 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԿՈՄ 5-11-22«Անհատական վաճառքի կազմակերպում» մոդուլը: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Սահմանել մերչանդայզինգի տեխնոլոգիայի ներդրման մեթոդաբանական հիմքերը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է բնորոշում մերչանդայզինգի հասկացությունը,<br>բ. ճիշտ է ներկայացնում մերչանդայզինգի կապը և նշանակությունը առևտրային գործունեությա մեջ: |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Կիրառել ապրանքների վաճառքի մեթոդները մերչանդայզինգի հիմնական սկզբունքներով և մեթոդներով |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է օգտագործում ապրանքների իմպուլսիվ գնումների ձևերը,<br>բ. ճիշտ է օգտագործում ապրանքների վաճառի ABC մեթոդը,<br>գ. ճիշտ է կազմակերպում պարենային և ոչ պարենային ապրանքների մերչանդայզինգը: |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Կիրառել առևտրի օբյեկտի գծագրման և ապրանքների դասավորման մերչանդայզինգի մոտեցում |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է դասավորում ապրանքները ելնելով մերչանդայզինգի մոտեցումներից, |

| | |
|---|---|
| | բ. ճիշտ է ձևավորում ապրանքները և վաճառակետը: |
| **«ԼՈԳԻՍՏԻԿ ԿԱՊՈՒՂԻՆԵՐ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԿՈՄ 5-11-024 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսված է կոմերսանտի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել կարողություններ սեփական ընկերությունում պահեստային, տրանսպորտային տնտեսությունների, ինչպես նաև բեռնման ու բեռնաթափման աշխատանքների արդյունավետ կազմակերպման, մատակարարների, և տրանսպորտային ընկերությունների որոնման, գնահատման և ընտրության, մատակարարման (դիստրիբյուցիոն) շղթայի պլանավորման և մատակարարումների բյուջեի մշակման ուղղությամբ: Այս մոդուլը ուսանողի մոտ կարողություններ պետք է ձևավորի նաև առևտրային միջնորդներին մատակարումների արդյունավետ կազմակերպման, լոգիստիկ ծառայության աշխատանքների կազմակերպման և պլանավորման ուղղությամբ:<br>Ավարտելով այս մոդուլը ուսանողը կկարողանա կազմակերպել ընկերության լոգիստիկ ծառայությունը, ապահովել առևտրական միջնորդներին մատակարարումների անխափանությունը, բացահայտել, գնահատել և ընտրել անհրաժեշտ մատակարարների և մատակարարման շղթայի այլ գործընկերների: |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԿՈՄ 5-11-23 «Մերչանդայզինգ» մոդուլը: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Ելնելով արտադրական պլանի կանխատեսումներից հաշվարկել անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի կազմը, կառուցվածքը և ծավալները (ֆիզիկական և դրամական կտրվածքով) |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում նյութական ռեսուրսների և արտադրության միջոցների ժամանակին մատակարարման նշանակությունը շուկայական գործունեության ծավալման հարցում, |

| | |
|---|---|
| | բ. ճիշտ է կարողանում ելնելով արտադրական պլանի կանխատեսումներից հստակեցնել նյութական ռեսուրսների ու արտադրության միջոցների ձեռք բերման հիմնախնդիրը, միջոցների ձեռք բերման անհրաժեշտ կառուցվածն ու ծավալները: |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Որոնել մատակարարներ, վերլուծել և գնահատել նրանց առաջարկած մատակարարման պայմանները և դրանց միջև կատարել արդյունավետ ընտրություն |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում մատակարարների որոնման գործընթացը, դրանց առաջարկությունների գնահատման և ընտրության չափանիշները,<br>բ. ճիշտ է կարողանում ոլորտային տեղեկագրերում և այլ մասնագիտացված տվյալների շտեմարաններում որոնել անհրաժեշտ մատակարարների, համեմատել դրանց առաջարկած պայմանները և ելնելով նպատակներից ընտրել գործընկերների: |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Որոնել մատակարարումների ուղեկցման ծառայություններ մատուցողների (տրանսպորտային, բեռնման-բեռնաթափման ընկերություններ, հավաստագրման և ապահովագրական ընկերություններ), վերլուծել և գնահատել դրանց առաջարկած ծառայությունները և ընտրել մատակարարման գործընթացի գործընկերներ |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում մատակարարման գործընթացը և դրան ուղեկցող ծառայությունները,<br>բ. ճիշտ է կարողանում ոլորտային տեղեկագրերում և այլ մասնագիտացված տվյալների շտեմարաններում որոնել մատակարարման ուղեկցման ծառայություններ մատուցող ընկերությունների, համեմատել դրանց առաջարկած պայմանները և ելնելով նպատակներից ընտրել մատակարարման շղթայի գործընկերների: |
| **ՈՒսումնառության արդյունք 4** | Հաշվարկել անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսների մատակարարման վերջնական արժեքը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում մատակարարման շղթայի ծախսագոյացման գործընթացը,<br>բ. ճիշտ է կարողանում ելնելով մատակարարման գնից, մատակարարման շղթայի սուբյեկտների |

| | |
|---|---|
| | սակագներից և մատակարարման գործընթացի այլ ծախսերից հաշվարկել մատակարարման վերջնական արժեքը իր կազմակերպության պահեստում: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Ելնելով վաճառքի բաժնի ամենօրյա հայտերից կազմակերպել մատակարարումները ա. ճիշտ է ներկայացնում մատակարարման շղթայի ծախսագոյացման գործընթացը, |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում մատակարարման շղթայի ծախսագոյացման գործընթացը,<br>բ. ճիշտ է կարողանում ելնելով մատակարարման գնից, մատակարարման շղթայի սուբյեկտների սակագներից և մատակարարման գործընթացի այլ ծախսերից հաշվարկել մատակարարման վերջնական արժեքը իր կազմակերպության պահեստում: |
| **Ուսումնառության արդյունք 6** | Ձևավորել սեփական ընկերության լոգիստիկ ծառայությունը և կազմակերպել դրա ամենօրյա աշխատանքը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում ընկերության լոգիստիկ ծառայության կառուցվածքը և դրա կազմակերպման անհրաժեշտ պայմանները,<br>բ. ճիշտ է կարողանում է չափորոշել լոգիստիկ ծառայությանն անհրաժեշտ աշխատակիցների որակավորումը, քանակը և ռեսուրսների նպատակային ծավալները,<br>գ. ճիշտ է կարողանում հաշվարկել լոգիստիկ ծառայության ծախսերը և մշակել լոգիստիկ ծառայության բյուջե: |
| **«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԿՈՄ 5-11-025 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսված է կոմերսանտի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է սովորեցնել միջազգային առևտրային գործունեության ձևերը, միջազգային առևտրի պայմանները, միջազգային պարտավորագրերում կիրառվող գները, ներմուծման-արտահանման կազմակերպման գործընթացը,ինչպես նաև ծանոթացնել արտոնագրային համակարգի կառուցվածքին և արտոնագրերի |

| | |
|---|---|
| | ձևերին:<br>Ավարտելով այս մոդուլը ուսանողը կկարողանա իրականացնել ներմուծման-արտահանման գործառնություններ, կտիրապետի արտոնագրերի տարբերի ձևերի հետ իրականացվող գործընթացերին և միջազգային առևտրի պայմաններին: |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԿՈՄ 5-11-24«Լոգիստիկ կապուղիներ» մոդուլը: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| **ՈՒսումնառության արդյունք 1** | Ներկայացնել միջազգային առևտրային գործունեության ձևերը |
| **Կատարման չափանիշներ** | ա. Ճիշտ է ներկայացնում առևտրի համաշխարհային կենտրոնների դերը ժամանակակից պայմաններում,<br>բ. ճիշտ է կատարում քլիրինգ/անկանխիկ հաշվարկներ/,<br>գ. ճիշտ է ներկայացնում հանդիպակաց առևտուրը և կարողանում է կատարել ներմուծման-արտահանման գործառնություններ: |
| **ՈՒսումնառության արդյունք 2** | Տիրապետել միջազգային առևտրի պայմաններին(INCOTERMS) և պատկերացնել պարտավորագրերում կիրառվող գները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում ապրանքների տեղաշարժը և վճարումները մի կետից մյուսը,<br>բ. ճիշտ է ներկայացնում վճարումները չկատարելու և ապրանքների փոխադրումների ժամանակ կորստի կամ փչացումների հետ կապված ռիսկերը և դրանց պատասխանատվությունը,<br>գ. ճիշտ է բնութագրում ներմուծման–արտահանման արտոնագրերը, փաստաթղթերի բովանդակությունը և ձևապերպումը պահանջվող ձևով, ապրանքների ապահովագրական ձևի որոշումը, վճարումը,<br>դ. ճիշտ է կիրառում միջազգային առևտրի պայմանները և դրանցում ներկայացված գները(FX WORKS-գործարանից, FRX-ֆրանկո-փոխադրող, FOR/FOT-ֆրանկո-վագոն(կառամատույց), FOB-ֆրանկո- |

| | |
|---|---|
| | նավահանգիստ, FOA-ֆրանկո-օդանավակայան, EXS-նավից..., DAF-ապրանքը մատակարարված է մինչև սահման, և այլն): |
| **ՈՒսումնառության արդյունք 3** | Իրականացնել ներմուծման-արտահանման գործառնություններ |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է գնահատում և ներկայացնում շուկայական իրավիճակը,<br>բ. ճիշտ է ընտրում արտասահմանյան գործընկերոջը,<br>գ. ճիշտ է բնորոշում պոտենցիալ արտահանողի հետ շփումների համար օգտագործվող միջոցառումները,<br>դ . ճիշտ է ներկայացնում ներմուծման-արտահանման գործարքների կնքման ձևերը: |
| **ՈՒսումնառության արդյունք 4** | Ներկայացնել արտոնագրային գործունեությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է բնութագրում ներմուծման համակարգը,<br>բ. ճիշտ է կիրառում արտոնագրերի տարբեր տեսակները: |
| **ՈՒսումնառության արդյունք 4** | Գնահատել ձեռնարկատիրական ռիսկը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է բնորոշում ձեռնարկատիրական ռիսկը և դրա տեսակները,<br>բ. ճիշտ է գնահատում առևտրային ռիսկի մակարդակները,<br>գ. ճիշտ է որոշում առևտրային ռիսկի վրա ազդող գործոնները,<br>դ. ճիշտ է ընտրում ձեռնարկատիրական ռիսկի նվազեցման ուղիները: |

Աղյուսակ 3

Միջին մասնագիտական կրթության 0806 «Առևտուր ըստ ճյուղերի» մասնագիտության օրինակելի ուսումնական պլան

| N | Առարկայախմբեր, առարկաներ և մոդուլներ | Շաբաթների թիվը | Ուսանողի առավելագույն բեռնվածությունը, ժամ | Պարտադիր լսարանային պարապմունքներ, ժամ | Ուսուց-ման երաշխա-վորվող տարին |
|---|---|---|---|---|---|
| | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ** | | | | |
| 1. | Հայոց լեզվի և խոսքի հիմունքներ | | 108 | 72 | 1 |
| 2. | Տնտեսագիտության հիմունքներ | | 80 | 54 | 1 |
| 3. | Քաղաքացիության և սոցիոլոգիայի հիմունքներ | | 80 | 54 | 1 |
| 4. | Իրավունքի հիմունքներ | | 54 | 36 | 2 |
| 5. | Պատմություն | | 80 | 54 | 1 |
| 6. | Ռուսաց լեզու | | 100 | 72 | 1 |
| 7. | Օտար լեզու | | 100 | 72 | 1 |
| 8. | Ֆիզիկական կուլտուրա | | 122 | 122 | 1,2 |
| 9. | Էկոլոգիայի հիմունքներ | | 54 | 36 | 2 |
| 10. | Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր | | 27 | 18 | 2 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **805** | **590** | |
| | **ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | |
| 1. | Հաղորդակցության հմտություններ | | 80 | 54 | 1 |
| 2. | Համակարգչային օպերատորության հիմունքներ | | 80 | 54 | 1 |
| 3. | Անվտանգություն և առաջին օգնություն | | 54 | 36 | 1 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **214** | **144** | |
| | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ** | | | | |
| 1. | Ապրանքագիտություն | | 100 | 72 | 1 |
| 2. | Ապրանքների որակի և անվտանգության հիմունքներ | | 54 | 36 | 1 |
| 3. | Տնտեսագիտություն | | 54 | 36 | 1 |
| 4. | Մարքեթինգային գործունեություն | | 100 | 72 | 1 |
| 5. | Կառավարման հմտություններ | | 80 | 54 | 1 |
| 6. | Հաշվապահական հաշվառման հմտություններ | | 100 | 72 | 1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7. | Ստանդարտացում | | 80 | 54 | 1 |
| 8. | Գործարար գրագրություն | | 80 | 54 | 1 |
| 9. | Գործարար էթիկա | | 54 | 36 | 1 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **702** | **486** | |
| | **ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ** | | | | |
| 1 | Մասնագիտական գործունեության բնագավառի իրավագիտություն | | 80 | 72 | 2 |
| 2. | Առևտրային գործունեություն | | 100 | 72 | 2 |
| 3. | Մանրածախ առևտուր | | 100 | 72 | 2 |
| 4. | Մեծածախ առևտուր | | 100 | 72 | 2 |
| 5. | Առևտրի սարքավորումներ | | 54 | 36 | 2 |
| 6. | Առուվաճառքի պայմանագրային գործունեության հմտություն | | 100 | 72 | 2 |
| 7. | Վաճառքի հաղորդակցություն | | 72 | 54 | 2 |
| 8. | Ապրանքների առուվաճառքի միջնորդային գործարքների հմտություններ | | 54 | 36 | 2 |
| 9. | Առևտրային տեղեկատվության ստացման և հաղորդակցման հմտություններ | | 54 | 36 | 2 |
| 10. | Գովազդի կազմակերպում | | 72 | 54 | 2 |
| 11. | Վաճառքի խթանման կազմակերպում | | 80 | 54 | 2 |
| 12. | Անհատական վաճառքի կազմակերպում | | 80 | 54 | 2 |
| 13. | Մերչանդայզինգ | | 80 | 54 | 2 |
| 14. | Լոգիստիկ կապուղիներ | | 100 | 72 | 2 |
| 15. | Միջազգային առևտրային գործառնություններ | | 100 | 72 | 2 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **1226** | **882** | |
| | **ԸՆՏՐՈՎԻ** | | | 60 | 2 |
| | **ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ** | | | **34** | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **61** | | **2196** | |
| | **ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ** | | **100** | **100** | **2** |
| | **ՊՐԱԿՏԻԿԱ** | **15** | | **540** | **1,2** |
| | **ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ** | **4** | | | |
| | **ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ** | **2** | | | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **82** | | | |